

ԴԱՏԱԽԱՂ
ԸՍՏ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ
ԷԶԵԼԻՆՆ ԸՆԴԴԵՄ
ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ
ԿԱՅԱՑՐԱԾ ՎՃՌԻ

2005թ. հոկտեմբեր
Իրավական ուղեցույց
<<http://www.legalguide.am>>

Սույն դատախազը, ներառյալ դրա մեթոդիկոգիան մշակվել է «Իրավական ուղեցույց» Հասարակական կազմակերպության նախագահ, փաստաբան Նարինե Գասպարյանի կողմից, ով էլ լիովին պատասխանատու է դրանց բովանդակության համար: Այս դատախազը հետապնդում է բացառապես կրթական և ուսուցողական նպատակ:

Դատախազը մշակվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից:

© 2005 «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպություն: Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	4
ՄԱՍ I. ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԴԱՏԱԽԱՂԸ ՎԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ.....	5
Ա. Դատախաղի նպատակը	5
Բ. Մեթոդական ցուցումներ դատախաղը վարողների համար դատախաղի նախապատրաստման և իրականացման կապակցությամբ.....	5
1. Դատախաղի Նախապատրաստական փուլ.....	6
2. Դատախաղի անցկացման փուլ.....	7
3. Դատախաղի վերաբերյալ վարողի նկատառումների ներկայացման փուլ.....	8
4. Դատախաղի ամփոփման փուլ.....	9
ՄԱՍ II. ՀԱՎԵԼՎԱԾ Ա-- ԷԶԵԼԻՆՆ ԸՆԴԴԵՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ—ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԽՈՒՄԲ Ա-Ի ՀԱՄԱՐ.....	10
ՄԱՍ III. ՀԱՎԵԼՎԱԾ Բ-- ԷԶԵԼԻՆՆ ԸՆԴԴԵՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ—ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԽՈՒՄԲ Բ-Ի ՀԱՄԱՐ	11
ՄԱՍ IV. ՀԱՎԵԼՎԱԾ Գ-- ԷԶԵԼԻՆՆ ԸՆԴԴԵՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ—ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԽՈՒՄԲ Գ-Ի ՀԱՄԱՐ	12
ՄԱՍ V. ՀԱՎԵԼՎԱԾ Դ -- ԷԶԵԼԻՆՆ ԸՆԴԴԵՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳՈՐԾԻ ՓԱՍՏԵՐԻ ՈՉ-ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	13
ՄԱՍ VI. ՀԱՎԵԼՎԱԾ Ե--ԷԶԵԼԻՆՆ ԸՆԴԴԵՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՅԱՑՐԱԾ ՎՃՌԻ ՈՉ-ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	22
ՄԱՍ VII. ՀԱՎԵԼՎԱԾ Զ--ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ.....	33

Ներածություն

Սույն դատախազը մշակվել է հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ «Եվրոպական դատարան») կողմից 1991 թ. մարտի 18-ին քննած Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի գործը: Գործը վերաբերում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ «Եվրոպական կոնվենցիա») երաշխավորված հավաքների ազատության խախտմանը:

Դատախազի նպատակն է Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի գործը Եվրոպական դատարանի առջև ներկայացնելու միջոցով իրավաբանի մասնագիտություն ունեցող երիտասարդ կադրերին հնարավորություն տալ ծանոթանալ Եվրոպական դատարանում փաստարկներ ներկայացնելու ընթացակարգին ու մոտեցումներին: Սա նաև մասնակիցներին հնարավորություն կտա մանրամասն վերլուծել գործով դիմումատուի գանգատն ու Ֆրանսիայի կառավարության առարկությունները, ինչպես նաև Եվրոպական դատարանի դիրքորոշումը:

Սույն դատախազն իր բնույթով ուսուցողական է և նպատակ ունի իրավաբանի մասնագիտություն ունեցողներին, այդ թվում երիտասարդ իրավաբաններին, փաստաբաններին, իրավաբանական ծառայություններ մատուցողներին, մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված ծրագրերում ներգրավված անձանց և իրավաբանական կրթություն ստացող ուսանողներին, հնարավորություն ընձեռել ծանոթանալու այն չափանիշներին և ստանդարտներին որոնցով առաջնորդվում է Եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքները և ազատությունները մեկնաբանելիս:

ԴԱՏԱԽԱՂ

ԷԶԵԼԻՆՆ ԸՆԴԴԵՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՅԱՑՎԱԾ ՎՃՌԻ ՀԻՄԱՆ ԿՐԱ

ՄԱՍ Ի.

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԴԱՏԱԽԱՂԸ ՎԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ա. Դատախաղի նպատակը

Սույն դատախաղը նախատեսված է բուհերի իրավաբանական ֆակուլտետների կամ իրավաբանական բուհերի ուսանողների, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (Այսուհետ՝ «Եվրոպական կոնվենցիա») վերաբերյալ խորացված ուսուցումն անցնող իրավաբանի մասնագիտություն ունեցողների, մասնավորապես երիտասարդ իրավաբանների, փաստաբանների ինչպես նաև լրագրողների, ովքեր մասնագիտանում են հետաքննող լրագրության ոլորտում:

Սույն դատախաղը պետք է իրականացվի դատախաղի մասնակիցների համար Եվրոպական կոնվենցիայի 10-րդ (արտահայտվելու ազատություն) և 11-րդ (հավաքների և միավորման ազատություն) հոդվածների ընդհանուր սկզբունքների և չափանիշների վերաբերյալ դասընթաց անցկացնելուց հետո: Սույն դատախաղը նպատակ ունի դատախաղի մասնակիցներին Եվրոպական կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածների վերաբերյալ ունեցած տեսական գիտելիքները պրակտիկայում կիրառելու հնարավորություն ընձեռել:

Դատախաղի արդյունքում մասնակիցները.

- կամրապնդեն արտահայտվելու ազատության և հավաքների ազատության իրականացման հետ կապված կոնկրետ հարցերի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ «Եվրոպական դատարան») կողմից մշակված մոտեցումների և չափանիշների վերաբերյալ իրենց ունեցած գիտելիքները,
- Եվրոպական կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածներով սահմանված նորմերի և Եվրոպական դատարանի վճիռների անմիջական կիրառման միջոցով կզարգացնեն գործի փաստերի մեկնաբանման իրենց հմտությունները,
- Եվրոպական դատարանի կայացրած համապատասխան վճիռների և դատախաղի փաստերի համադրության արդյունքում կամրապնդեն իրավական հետևություններ ներկայացնելու իրենց հմտությունները,
- Կզարգացնեն իրենց փաստաբանական բանավոր հմտությունները:

Բ. Մեթոդական ցուցումներ դատախաղը վարողների համար դատախաղի նախապատրաստման և իրականացման կապակցությամբ

Դատախաղը վարողը(ները) պետք է լավ տիրապետեն Եվրոպական կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածների նորմերին և Եվրոպական դատարանի կողմից կայացված համապատասխան վճիռներին:

Դատախաղի առանձնահատկությունն ու դրա նպատակները հաշվի առնելով այն պետք է իրականացվի փոքր խմբերի համար, այն է՝ ոչ պակաս քան տաս և ոչ ավել քան 13 մասնակիցների համար:

Դատախաղի իրականացումը բաղկացած է հետևյալ փուլերից:

Դատախաղը մշակել է Նարինե Գասպարյանը

© 2005 «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպություն

Բոլոր հեղինակային իրավունքները պաշտպանված են

1. Նախապատրաստական,
2. Դատախաղի անցկացման,
3. Դատախաղի վերաբերյալ վարողների նկատառումների ներկայացման,
4. Դատախաղի ամփոփման:

1. Դատախաղի Նախապատրաստական փուլ. Դատախաղը վարողը(ները) դրա անցկացումից մեկ կամ մի քանի օր, սակայն ոչ ավել քան երեք օր առաջ պետք է մասնակիցներին ներկայացնի Եվրոպական կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածների վերաբերյալ նյութը և դրա ավարտին ներկայացնի դատախաղի նպատակները: Դրան պետք է հաջորդի մասնակիցների միջև դերերի բաշխումը հետևյալ ընթացակարգով՝

1. Խումբ Ա-ն-ին, որը կարող է բաղկացած լինի նվազագույնը երեք, իսկ առավելագույնը չորս մասնակցից, պետք է տրամադրվեն ստորև ներկայացված *Հավելված Ա-ն*, այն է՝ Խումբ Ա-ի համար նախատեսված կանոնները և *Հավելված Դ-ն*, այն է՝ Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի գործի ոչ պաշտոնական համառոտ շարադրանքը: Խումբ Ա-ն Եվրոպական դատարանի առջև պետք է ներկայացնի գործով Դիմումատուի շահերն ու իրավունքները:
2. Խումբ Բ-ն-ին, որը կարող է բաղկացած լինի նվազագույնը երեք, իսկ առավելագույնը չորս մասնակցից, պետք է տրամադրվեն ստորև ներկայացված *Հավելված Բ-ն*, այն է՝ Խումբ Բ-ի համար նախատեսված կանոնները և *Հավելված Դ-ն*, այն է՝ Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի գործի ոչ պաշտոնական համառոտ շարադրանքը: Խումբ Բ-ն Եվրոպական դատարանի առջև պետք է պաշտպանի պատասխանող մասնակից պետության, այն է՝ Ֆրանսիայի կառավարության շահերը:
3. Եվրոպական դատարանի կազմին, որը կարող է ներառի նվազագույնը չորս իսկ առավելագույնը հինգ մասնակից, պետք է տրամադրվի *Հավելվածներ Ա-ն, Բ-ն, Գ-ն և Դ-ն*:
4. Հավելված Դ-ն, որը Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանի վճիռն է ներառում, պետք է մասնակիցներին տրամադրել բացառապես դատախաղի վերաբերյալ վարողի նկատառումների ներկայացումից հետո:
5. Մասնակիցներին անհրաժեշտ է տրամադրել նաև դատախաղին պատրաստվելու համար անհրաժեշտ նյութեր, այդ թվում Եվրոպական կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածների տեքստը, որը ներառված է *Հավելված Զ-ում* և Եվրոպական դատարանի կողմից 10-րդ և 11-րդ հոդվածների վերաբերյալ կայացրած համապատասխան վճիռների ցանկը, հնարավորության դեպքում նաև դրանց տեքստը:
6. *Հավելված Ե-ն*, որում ներառված է Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը, պետք է տրամադրվի մասնակիցներին բացառապես մրցույթի ավարտից հետո, այն է՝ սույն դատախաղի ամփոփման փուլի ժամանակ:

Դատախաղի մասնակիցներին պետք է նվազագույնը մեկ օր ժամանակ հատկացվի դատախաղին պատրաստվելու համար և հնարավորության դեպքում պայմաններ ստեղծի թիմային աշխատանքի արդյունավետ իրականացման համար:

Դատախաղի նախապատրաստական փուլը ներառում է նաև դատախաղի իրականացման համար դատական սենյակը համապատասխան կառուցվածքով պատրաստելը¹, ինչպես նաև ժամանակային սահմանափակման կապակցությամբ

¹ Սենյակում պետք է առանձնացվեն սեղաններ համապատասխանաբար դատարավորների, որը պետք է լինի կենտրոնում, դիմումատուի բանախոսների, պատասխանող մասնակից պետության բանախոսների, որոնք պետք է այնպես տեղակայված լինեն, որ մասնակիցները դեմքով կանգնած լինեն դեպի դատարանը: Վարողը պետք է նստի այնպես, որ իր կողմից արվող գրառումները

կողմերին ծանուցում տալու հնարավորությունների ստեղծումը: Դա կարող է անել կամ վարողը կամ էլ այնպիսի մասնակից, որը չի մասնակցում դատախազի իրականացմանը:

2. Դատախազի անցկացման փուլ.

Դատախազը պետք է իրականացվի հետևյալ ընթացակարգով.

<i>Գործունեության նկարագիր</i>	<i>Իրականացնողներ</i>	<i>Ժամանակային սահմանափակում</i>
Դատախազի բացում	Վարող	5 րոպե
Գործի փաստերի ներկայացում	Դիմումատուի առաջին բանախոս	5 րոպե
Դիմումատուի արտահայտվելու ազատության իրավունքի ենթադրյալ խախտումների ներկայացում և հիմնավորում Կոնվենցիայի նորմերի և Դատարանի վճիռների անմիջական կիրառման միջոցով	Դիմումատուի երկրորդ բանախոս	15 րոպե
Դիմումատուի հավաքների ազատության իրավունքի ենթադրյալ խախտումների ներկայացում և հիմնավորում Կոնվենցիայի նորմերի և Դատարանի վճիռների անմիջական կիրառման միջոցով	Դիմումատուի երրորդ բանախոս	15 րոպե
Գործի փաստերի ներկայացում, եթե դիմումատուն ներկայացրել է աղավաղված փաստեր	Պատախանող մասնակից պետության առաջին բանախոս	5 րոպե
Դիմումատուի արտահայտվելու ազատության իրավունքի ենթադրյալ խախտումների բացառում և դրա հիմնավորում Կոնվենցիայի նորմերի և Դատարանի կայացրած վճիռների անմիջական կիրառման միջոցով	Պատախանող մասնակից պետության երկրորդ բանախոս	15 րոպե
Դիմումատուի հավաքների ազատության իրավունքի ենթադրյալ խախտումների բացառում և դրա հիմնավորում Կոնվենցիայի նորմերի և Դատարանի կայացրած վճիռների անմիջական կիրառման միջոցով	Պատախանող մասնակից պետության երրորդ բանախոս	15 րոպե
Պնդումների ներկայացում	Դիմումատուի չորրորդ բանախոսը, կամ երեք բանախոսներից մեկը	5 րոպե
Առարկությունների ներկայացում	Պատախանող մասնակից	5 րոպե

չչեղեն մասնակիցների ուշադրությունը: Ժամանակային սահմանափակումների կապակցությամբ ծանուցում ներկայացնող մասնակիցը պետք է նստի այնպիսի տեղում, որը նկատելի կլինի մասնակիցների և դատարանի համար:

Դատախազը մշակել է Նարինե Գասպարյանը

© 2005 «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպություն

Բոլոր հեղինակային իրավունքները պաշտպանված են

	պետության Ե չորրորդ բանախոսը, կամ երեք բանախոսներից մեկը	
Ղատարանի կողմից Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի գործով կայացվելիք վճռի նախագծի մշակում	Եվրոպական դատարանի կազմում ներգրավված մասնակիցներ	20 րոպե
Եվրոպական դատարանի վճռի հրապարակում	Եվրոպական դատարանի կազմում ներգրավված մասնակիցներ	5 րոպե

Ծանոթացում. Ներկայացված ժամանակը ներառում է նաև դատարանի կողմից արվող հարցադրումներն ու դրանց կապակցությամբ մասնակիցների ներկայացրած պատասխանները:

3. Ղատախաղի վերաբերյալ վարողի նկատառումների ներկայացման փուլ

Ղատախաղի իրականացման ընթացքում դատախաղի վարողները պետք է հետևեն դրա ընթացքին և նշումներ կատարեն դիմումատուի և պատասխանող մասնակից պետության ներկայացուցիչների (բանախոսների) ելույթների կապակցությամբ: Ղատախաղի վերջում, դատարանի կողմից վճիռը ընթերցելուց հետո, դատախաղի վարողները պետք է ներկայացնեն իրենց առաջարկություններն ու դիտողությունները դիմումատուի, պատասխանող մասնակից պետության և դատարանի ներկայացուցիչների դրսևորած հմտությունների վերաբերյալ, մասնավորապես.

- Ղիմումատուի ներկայացուցիչների կողմից բանավոր փաստարկների, առանց գործի փաստերի փոփոխության և աղավաղման, ներկայացման վերաբերյալ՝ սահմանափակվելով բացառապես սույն դատախաղի նյութերով տրամադրված տեղեկություններով,
- Եվրոպական կոնվենցիայի նորմերի և Եվրոպական դատարանի վճիռների անմիջական կիրառման միջոցով գործի փաստերի մեկնաբանման ու Եվրոպական դատարանի կողմից կայացրած համապատասխան վճիռների եւ որոշումների՝ Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի գործի փաստերի համադրությունից բխող իրավական հետևությունների ներկայացման վերաբերյալ,
- Ղիմումատուի կողմից դատախաղի ժամանակ բարձրացված իրավական հարցերի, բանավոր փաստարկների և պնդումների ծավալին Պատասխանող մասնակից պետության ներկայացրած իրավական հակափաստարկների համապատասխանության վերաբերյալ,
- Ղիմումատուի և պատասխանող մասնակից պետության ներկայացուցիչների կողմից ներկայացված բանավոր փաստարկների և նկատառումների ներկայացման տրամաբանական կապի, հիմնավորվածության և դրանց ճիշտ կառուցվածքի վերաբերյալ,
- Ղիմումատուի և պատասխանող մասնակից պետության բանախոսների դրսևորած փաստաբանական բանավոր հմտությունների կատարելության, բանավոր խոսքի իրավական գրագիտության, հղկվածության, հռետորական ձիրքի վերաբերյալ,
- Ղատարանի կազմում ներգրավված մասնակիցների կողմից կատարվող հարցադրումների դիպուկության, հստակության և նպատակաուղղվածության վերաբերյալ՝ հիմք ընդունելով Եվրոպական դատարանի կողմից Կոնվենցիայի 10-րդ 11-րդ հոդվածների ենթադրյալ խախտումների քննության կապակցությամբ ընդունված համապատասխան նորմերը և չափանիշները,

- Դատարանի կողմից կայացրած վճռի համապատասխանությունը Եվրոպական կոնվենցիայի նորմերին և Եվրոպական դատարանի կողմից ընդունված վճռի կառուցվածքի և տրամաբանության վերաբերյալ,
- Այլ համապատասխան առաջարկություններ և դիտողություններ:

4. Դատախաղի ամփոփման փուլ

Դատախաղի վերջում վարողները պետք է ներկայացնեն էզելինն ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանի կայացրած վճիռը, ներառյալ առանձին կարծիքները, և քննարկեն դատարանի մոտեցումների և սույն դատախաղով կայացված վճռի տարբերություններն ու առանձնահատկությունները:

ՄԱՍ II.

ՀԱՎԵԼՎԱԾ Ա -- ԷԶԵԼԻՆ Ն ԸՆԴԴԵՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ
ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԽՈՒՄՔ Ա-Ի ՀԱՄԱՐ

Ձեր խումբը Եվրոպական դատարանի կողմից քննվող այս գործում հանդես է գալու որպես Դիմումատու: Գործը վերաբերում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածներով երաշխավորված արտահայտվելու և հավաքների ազատության իրավունքների ենթադրյալ խախտումներին:

Ձեր վստահորդի գործի մանրամասները ներկայացված են *Հավելված Դ-ում*: Ձեր վստահորդը պնդում է, որ խախտվել է իր հավաքների և միավորման ազատության իրավունքը:

Դատարանում փաստարկներ ներկայացնելու համար դուք պետք է կատարեք հետևյալը.

1. ծանոթացեք գործի փաստերին,
2. ծանոթացեք Եվրոպական կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածների բովանդակությանը,
3. պատրաստեք փաստարկներ Ձեր վստահորդի շահերը Դատարանին ներկայացնելու և իր իրավունքներն ու շահերը Եվրոպական կոնվենցիայի նորմերին համապատասխան պաշտպանելու համար,
4. դիտարկեք և ուսումնասիրեք այն բոլոր փաստարկները, որոնք հնարավոր է, որ կներկայացվեն Պատասխանող մասնակից պետության ներկայացուցիչների կողմից:

Դուք պետք է փաստարկներ ներկայացնեք Դատարանին, որ խախտվել է Ձեր վստահորդի արտահայտվելու և հավաքների ազատության իրավունքները և համապատասխան ապացույցներ և փաստարկներ ներկայացնեք դա ապացուցելու համար:

Ցանկալի է, որ դուք անդրադառնաք նաև հետևյալ հարցերին.

1. Արդյո՞ք տեղի է ունեցել միջամտություն Ձեր վստահորդի՝ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածներով երաշխավորված արտահայտվելու և հավաքների ազատության իրավունքների իրականացմանը,
2. Արդյո՞ք Ձեր վստահորդի արտահայտվելու և հավաքների ազատության իրավունքների իրականացման միջամտությունը նախատեսված է եղել օրենքով և համաչափ է եղել հետապնդվող իրավաչափ նպատակին,
3. Արդյո՞ք Ձեր վստահորդի արտահայտվելու և հավաքների ազատության իրավունքի իրականացման միջամտությունը անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում:

Բանավոր փաստարկները ներկայացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալով.

1. Միջազգայնորեն ընդունված փաստաբանական բանավոր խոսքի չափանիշներով,
2. բանավոր փաստարկների ներկայացման տրամաբանական կապի, հիմնավորվածության, ճիշտ կառուցվածքի և խմբի անդամների միջև հարցերի հստակ բաժանման առկայությամբ,
3. Փաստարկների հիմնավորումը՝ Եվրոպական դատարանի կողմից կայացրած համապատասխան վճիռների անմիջական կիրառմամբ,
4. Կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածների ենթադրյալ խախտումների վերաբերյալ պնդումների ներկայացումը՝ սահմանափակվելով գործի փաստերով և պատասխանող մասնակից պետության կողմից ներկայացված հիմնական փաստարկների ծավալով:

ՄԱՍ III

ՀԱՎԵԼՎԱԾ Բ-- ԷԶԵԼԻՆ ԸՆԴԴԵՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԽՈՒՄԲ - Բ-ի ՀԱՄԱՐ

Ձեր խումբը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննվող այս գործում պաշտպանելու է Պատասխանող մասնակից պետության, այն է՝ Ֆրանսիայի շահերը: Գործը վերաբերում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածներով երաշխավորված արտահայտվելու և հավաքների ազատության ենթադրյալ խախտումներին:

Գործի մանրամասները ներկայացված են *Հավելված Դ-ում*: Դիմումատուն պնդում է, որ խախտվել է հավաքների և միավորման ազատության իր իրավունքները:

Ղատարանում փաստարկներ ներկայացնելու համար Դուք պետք է կատարեք հետևյալը.

1. ծանոթացեք գործի փաստերին,
2. ծանոթացեք Եվրոպական կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածների բովանդակությանը,
3. պատրաստեք փաստարկներ Պատասխանող մասնակից պետության շահերը Ղատարանում պաշտպանելու համար,
4. դիտարկեք և ուսումնասիրեք այն բոլոր փաստարկները, որոնք հնարավոր է, որ կներկայացվեն գործով Դիմումատուի կողմից:

Դուք Մարդու իրավունքների եվրոպական դատարանին պետք է փաստարկներ ներկայացնեք, որ չի խախտվել Դիմումատուի արտահայտվելու և հավաքների ազատության իրավունքները և որ պետության միջամտությունը պարոն էզելինի հավաքների ազատության իրավունքի իրականացմանը եղել է օրենքով սահմանված կարգով և համապատասխանում է հետապնդվող իրավաչափ նպատակին:

Ցանկալի է, որ դուք անդրադառնաք նաև հետևյալ հարցերին.

1. Արդյո՞ք տեղի է ունեցել միջամտություն Դիմումատուի 10-րդ և 11-րդ հոդվածներով երաշխավորված արտահայտվելու և հավաքների ազատության իրավունքների իրականացմանը:
2. Եթե այո, ապա արդյո՞ք այդ միջամտությունը հետապնդել է Կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածների երկրորդ կետով նախատեսված իրավաչափ նպատակը(ները),
3. Արդյո՞ք Պատասխանող մասնակից պետության կողմից Դիմումատուի արտահայտվելու և հավաքների ազատության իրավունքների իրականացման միջամտությունը նախատեսված է եղել օրենքով և համաչափ է եղել հետապնդվող իրավաչափ նպատակին,
4. Արդյո՞ք Դիմումատուի արտահայտվելու և հավաքների ազատության իրավունքների իրականացման միջամտությունը Պատասխանող մասնակից պետության կողմից անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում:

Բանավոր փաստարկները ներկայացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալով.

1. Միջազգայնորեն ընդունված փաստաբանական բանավոր խոսքի չափանիշներով,
2. բանավոր փաստարկների ներկայացման տրամաբանական կապի, հիմանվորվածության, ճիշտ կառուցվածքի և խմբի անդամների միջև հարցերի հստակ բաժանման առկայությամբ,
3. Փաստարկների հիմնավորումը՝ Եվրոպական դատարանի կողմից կայացրած համապատասխան վճիռների անմիջական կիրառմամբ,

4. Առարկությունների և Կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածների ենթադրյալ խախտումները բացառող փաստարկների ներկայացումը՝ սահմանափակվելով Դիմումատուի կողմից ներկայացված փաստարկների և պնդումների ծավալով:

ՄԱՍ IV

ՀԱՎԵԼՎԱԾ Գ-- ԷԶԵԼԻՆ ԸՆԴԴԵՍ ՖՐԱՆՍԻԱՅԻ

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԽՈՒՄՐ - Գ-Ի ՀԱՄԱՐ

Ձեր խումբը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննվող այս գործում հանդես է գալու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դերում: Գործը վերաբերում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածներով երաշխավորված արտահայտվելու և հավաքների ազատության ենթադրյալ խախտումներին:

Գործի մանրամասները ներկայացված են *Հավելված Դ-ում*: Դիմումատուն պնդում է, որ խախտվել է հավաքների ազատության իր իրավունքը:

Դատավարությունը վարելու համար Դուք պետք է կատարեք հետևյալը.

1. ծանոթացեք գործի փաստերին,
2. ծանոթացեք Եվրոպական կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածների բովանդակությանը,
3. ծանոթանաք Հավելված Ա-ին, Բ-ին և Դ-ին,
4. դիտարկեք և ուսումնասիրեք այն բոլոր փաստարկները, որոնք հնարավոր է, որ կներկայացվեն գործով դիմումատուի և պատասխանող մասնակից պետության ներկայացուցիչների կողմից,
5. ծանոթացեք Հավելված Ա-ով և Բ-ով դիմումատուի և պատասխանող մասնակից պետության ներկայացուցիչներին առաջադրված պահանջներին՝ դատախազի իրականացման ժամանակ մասնակիցների կողմից դրանց հավանական խախտումը կանխելու համար:

Ցանկալի է, որ դուք հարցադրումների միջոցով պարզեք հետևյալը.

1. Արդյո՞ք տեղի է ունեցել միջամտություն Դիմումատուի 10-րդ և 11-րդ հոդվածներով երաշխավորված արտահայտվելու և հավաքների ազատության իրավունքների իրականացմանը:
2. Եթե այո, ապա արդյո՞ք այդ միջամտությունը հետապնդել է Կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածների երկրորդ կետով նախատեսված իրավաչափ նպատակը(ները),
3. Արդյո՞ք Պատասխանող մասնակից պետության կողմից Դիմումատուի արտահայտվելու և հավաքների ազատության իրավունքների իրականացման միջամտությունը նախատեսված է եղել օրենքով և համաչափ է եղել հետապնդվող իրավաչափ նպատակին,
1. Արդյո՞ք Դիմումատուի արտահայտվելու և հավաքների ազատության իրավունքների իրականացման միջամտությունը Պատասխանող մասնակից պետության կողմից անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում:

Դատախազի անցկացման ժամանակ Դուք իրավունք ունեք.

1. Վարել դատը՝ Եվրոպական դատարանի Կանոնակարգի և ընդունված ընթացակարգերի համապատասխան,
2. Ակտիվորեն հարցեր տալ դիմումատուի և պատասխանող մասնակից պետության ներկայացուցիչներին (բանախոսներին),
3. Անհրաժեշտության դեպքում ավելացնել դիմումատուի և պատասխանող մասնակից պետության ներկայացուցիչների ելույթների համար սահմանված ժամանակը, բայց ոչ ավել քան յուրաքանչյուր բանախոսի համար 5 րոպեով,
4. Կայացնել վճիռ, որը պետք է ունենա այնպիսի կառուցվածք, որով իրական կյանքում առաջնորդվում է Եվրոպական դատարանը: Դատարանը պետք է վճիռը կայացնի դատախազի ժամանակ Դիմումատուի և Պատասխանող մասնակից

պետության ներկայացուցիչների/բանախոսների կողմից ներկայացված փաստարկների անաչառ գնահատման արդյունքում: Ղուք իրավունք չունեք անդրադառնալ այնպիսի հարցերի, որոնք չեն բարձրացվել կողմերի կողմից դատախազի իրականացման ընթացքում:

ՄԱՍ V.

**ՀԱՎԵԼՎԱԾ 7 -- ԷԶԵԼԻՆՆ ԸՆԴԴԵՍ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳՈՐԾԻ ՓԱՍՏԵՐԻ ՈՉ-
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

**Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարան
Ստրասբուրգ**

1999 թվականի նոյեմբերի 21.

Դիմումատուն՝ պարոն Ռոլանդ Էզելինը, ազգությամբ ֆրանսիացի է, մասնագիտությամբ փաստաբան (avocat): Գործով իրադարձությունների տեղի ունենալու ժամանակ նա ապրում էր Բասսե-Տերեյում (Գվադելուպա) և հանդիսանում էր Գվադելուպայի Փաստաբանների միության Արհեստակցական միության փոխնախագահը: 1983 թվականի փետրվարի 12-ին Գվադելուպայի մի շարք անկախ շարժումներ և արհմիություններ հանրահավաք անցկացրեցին Բասսե-Տերեյում, բողոքի ակցիա կազմակերպելով դատարանի երկու որոշումների դեմ, որոնցով երեք ակտիվիստներ ազատազրկման էին դատապարտվել և տույժերի ենթարկվել հանրային նշանակության շենքերը վնասելու համար: Դիմումատուն մասնակցում էր հանրահավաքին և հանրահավաքի ժամանակ տանում էր ցուցապաստառ:

Բասսե-Տերեյի ոստիկանության պետը նույն օրը հաշվետվություն կազմեց և ներկայացրեց տարածքային դատախազին: Հաշվետվությունը, որը կազմված էր տասնմեկ հավելվածներից, ուներ հետևյալ բովանդակությունը.

... Այսօր մի շարք անկախ շարժումների կողմից Շամ դ'Աղբոյում (Champ d'Arbaud) ժամը 9-ին կազմակերպված հանրահավաքը, որի ընթացքը մենք վերահսկում էինք, վերածվել էր երթի քաղաքի փողոցներում: Հանրահավաքը ավարտվեց 10-ն անց 30 րոպեին և այնուհետև մասնակիցները երթ կազմակերպեցին քաղաքի փողոցներով՝ ոստիկանության և դատական համակարգի հասցեին թշնամական արտահայտություններ անելով: Երթի ժամանակ հանրահավաքի մասնակիցները մի շարք շենքերի, մասնավորապես Կենտրոնական զանձապետարանի շենքի վրա տարբեր գույնի ներկերով ոչ պատշաճ նկարներ և գրառումներ էին արել:

Շամ դ'Աղբոյից (Champ d'Arbaud) շարժված 450-500 մարդուն Շոելխեր փողոցի (Rue Schoelcher) մոտ միացավ 500 հոգուց բաղկացած մեկ այլ խումբ, կազմելով մոտ հազար հոգուց բաղկացած և պարագլուխների կողմից ղեկավարվող խումբ, ովքեր բարձրախոսների միջոցով հայտարարում էին իրենց լոզունգները: Որոշ պարագլուխների ինքնությունը հայտնի էր: Կատարվածի մասին ես անհապաղ զեկուցեցի Գլխավոր կոնստեբլին (Chief Constable): 11-ն անց 10 րոպե հանրահավաքի մասնակիցները մոտեցան ոստիկանության շենքին և հավաքվեցին շենքի առջև: Մինչ ես ձեռնարկում էի անհրաժեշտ միջոցառումներ շենքի վրա հարձակումները կանխելու համար, հանրահավաքի մասնակիցներն ավելի մոտեցան ոստիկանության շենքին, առաջնորդվելով երկու պարագլուխների կողմից, որոնք այդ տարածքից չէին և որոնց ոստիկանության ծառայողները չէին ձանաչում: Բանախոսները կոչ էին անում ոստիկանության աշխատակիցներին միանալ իրենց շարքերին:

Հնչում էին սպառնալիքներ ոստիկանության ծառայող Բոժանդըրի (Beaugendre) հասցեին, որը մեղադրվում էր մատնության համար, որից հետո ամբոխը պարբերաբար բացականչում էր BEAUGENDRE-MAKO! UN JOU OU KE PAYE' (Մի օր դու կվճարե՛ս): Հանրահավաքի այլ մասնակիցների մեջ ոստիկանները ձանաչել էին նաև Դոկտոր Կորենտին և փաստաբան պարոն Էզելինը: Նրանք տանում էին պաստառ, որի վրա գրված էին «ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐ-ԲԺՇԿՆԵՐ» բառերը: Այնուամենայնիվ, հանրահավաքի մասնակիցների մեծամասնությունը, ներառյալ նրանց առավել ակտիվ ու ագրեսիվ մասը,

Բասսե-Տերեյից չէին, հնարավոր է, որ նրանց մեծ մասը Գրանդե-Տերրե կղզուց էին, այդ իսկ պատճառով ուստիկանության ծառայողները նրանց չէին ճանաչում:

Երթի մասնակիցները հեռացան ուստիկանության շենքի մոտից 11-ն անց 30 րոպեին և շարժվեցին Առաջին աստիանի դատարանի և Խորհրդի շենքի ուղղությամբ: Երթը այնուհետև շարունակվեց Ֆելիքս-Էբուռ (Félix-Eboué) այգու մոտով և վերջապես հասավ Շամ դ'Արբո (Champ d'Arbaud) որտեղ էլ այն ցրվեց, երկու երկարատև երթադադար կատարելուց հետո, որի ընթացքում հնչում էին ելույթներ և լուզունգներ սկզբում առաջին աստիանի դատարանի շենքի առջև, դատավորներին վիրավորելու համար, այնուհետև բանտի առջև, իրենց աջակցությունը համախոհներին հաղորդելու համար: Երթի մասնակիցների մեկնումից հետո պարզ դարձավ, որ նրանք, օգտվելով առիթից կանաչ, կարմիր և սև գույնի ներկերով տարբեր վիրավորական և զրպարտող նկարներ և գրառումներ են արել վարչական շենքերի վրա:

Դրանից անմիջապես հետո սկսված հետաքննությունը չկարողացավ բացահայտել շենքերի վրա նկարներ և գրառումներ անողների անձը: Ստացված տեղեկությունների համաձայն, նկարների և գրառումների մեծ մասը արվել էին մի քանի կանանց կողմից, որոնք Բասսե-Տերեյից չէին, ինչն էլ հենց արվել էր նրանց ինքնությունը չբացահայտելու նպատակով: Նրանցից մեկը, ոչ հավաստի տեղեկությունների համաձայն, ուսուցչուհի է Փուանթ-ա-Փիթրից (Pointe-a-Pitre), բայց այս փաստը ամբողջությամբ հաստատված չէ: Հետախուզական ծառայությունը հաստատեց, որ նկարների և գրառումների համար պատասխանատուները հանրահավաքի մասնակիցների շարքերից էին, ովքեր Փուանթ-ա-Փիթրից (Pointe-a-Pitre) եկել են ավտոբուսով: Նրանք այդ անձանց չէին ճանաչում:

B. ՎԱՐՈՒՅԹԸ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ

Դատական հետապնդումը սկսվեց 1983 թվականի փետրվարի 21-ին հանրային նշանակության շենքերի վրա վիրավորական և զրպարտող նկարներ և գրառումներ անելու առիթով: Փետրվարի 24-ին Բասսե-Տերեյի վերաքննիչ դատարանին առընթեր Գլխավոր դատախազը գրավոր նամակ ուղարկեց Գվադելուպայի փաստաբանների միության նախագահին, այն մասին, որ 1983 թվականի փետրվարի 21-ին ուստիկանության կողմից ներկայացված զեկույցից պարզ է դառնում, որ պարոն Էգելինը, Գվադելուպայի փաստաբանների միության անդամը, մասնակցել է դատական համակարգի դեմ ուղղված հանրահավաքին այնպիսի հանգամանքներում, որոնք քրեական օրենսգրքի 226 հոդվածի համաձայն քրեորեն հետապնդելի արարք են համարվում և առաջացնում են պատասխանատվության կիրառման մեծ հավանականություն: Բասսե-Տերեյի վերաքննիչ դատարանին առընթեր Գլխավոր դատախազը նամակով նաև խնդրում էր, որ Գվադելուպայի փաստաբանների միության նախագահին իրեն տեղեկացնի այս գործի կապակցությամբ իր կարծիքը՝ միության կոլեգիայում այն քննարկելուց և իրենց գործընկերների բացատրությունները լսելուց հետո:

1983 թվականի մարտի 14-ին Փաստաբանների միության նախագահը տեղեկացրեց Գլխավոր դատախազին իր կատարած քննության արդյունքների մասին հետևյալ բովանդակություն ունեցող նամակով.

«... Պարոն Էգելինը հանրահավաքի ժամանակ միայնակ տարել է ցուցապաստառ, որի վրա գրված է եղել «Գվադելուպայի փաստաբանների միության արհեստակցական միությունը ընդդեմ Անվտանգության և ազատության ակտին»: Դատական համակարգը վիրավորող ոչ մի գործողություն, արարք կամ բառ նրան չի կարող վերագրվել: Հանրահավաքին նրա մասնակցությունը հետևաբար հետապնդել է Անվտանգության և անկախության ակտի գործողության դեմ իր բողոքը ներկայացնելու նպատակ...» :

Նա եզրակացրեց.

«Հետևաբար, նկատի ունենալով.

ա) փաստերը. եթե նույնիսկ պարոն Էգելինի նկատմամբ դիտարկենք վատագույն տարբերակը, ապա այդ դեպքում անգամ Գլխավոր ոստիկանապետը ... չի մեղադրում նրան վիրավորական գործողություն, արարք կատարելու կամ բառ օգտագործելու մեջ, բ) Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածի դրույթները. ինձ չի թվում, որ իմ կոլեգա պարոն Էգելինը պետք է որևէ պատասխանատվության ենթարկվի չարգելված հանրահավաքին մասնակցելու իր իրավունքը իրականացնելու և ցուցապաստառ տանելու համար, որի վրա գրված է եղել «Գվաղելուպայի փաստաբանների միության արհեստակցական միությունն ընդդեմ Անվտանգության և ազատության ակտին» բառերը...»:

Որոշ ժամանակ անց, 1983 թվականի ապրիլի 25-ին, Դիմումատուն հրավիրվեց քննությունը իրականացնող դատավորի մոտ որպես վկա ցուցմունք տալու նպատակով և իր հարցազրույցի ժամանակ նշեց, որ այդ դեպքի կապակցությամբ ոչինչ չունի ասելու: 1983 թվականի մայիսի 19-ին գործի քննությունը կարճվեց այն հիմքով, որ չկար որևէ ապացույց, որը հնարավորություն կտար պարզել հանրահավաքի ընթացքում նկարների և գրառումների կամ հնչած վիրավորական կամ սպառնալիքների համար պատասխանատուների անձը:

C. ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՐՈՒՅՅԸ

1. Փաստաբանների միության խորհրդի որոշումը.

1983 թվականի հունիսի 1-ին Գլխավոր դատախազը Փաստաբանների միության նախագահին հետևյալ բովանդակությամբ բողոք ուղարկեց.

«Ի լրացումն 1983 թվականի փետրվարի 24-ի իմ նամակի և մայիսի 31-ին մեր միջև կայացած զրույցի, ուզում եմ Ձեր ուշադրությանը ներկայացնել նաև 1972 թվականի հունիսի 9-ի Դեկրետի 113-րդ հոդվածը, որն առնչվում է Գվաղելուպայի Փաստաբանների միության անդամ պարոն Էգելինի վարքագծին: Ավելի վաղ իմ կողմից Ձեզ ուղարկված նամակին ես կցել էի ոստիկանության կողմից մշակված հաշվետվության պատճեն, որը վկայում էր 1983 թվականի փետրվարի 12-ին կայացած հանրահավաքին պարոն Էգելինի մասնակցության մասին: Հանրահավաքի ընթացքում դատարանի շենքի վրա մի շարք վիրավորական նկարներ և գրառումներ էին արվել, որոշումներից մեկի կայացմանը մասնակցած դատավորին անվանելով ֆաշիստ և բոլոր դատավորներին անվանելով 'MAKO' [կավատներ]: Հանրահավաքի մասնակիցները բազմաթիվ դեպքերում նույնիսկ մահվան սպառնալիքներ էին հնչեցնում ներկա գտնվող ոստիկանության ծառայողների նկատմամբ:

Բասսե-Տերրեյի հետաքննող դատավորը քննություն սկսեց հասարակական շենքերը վնասելու, դատարաններին վիրավորելու մեջ մեղավոր անձի կամ անձանց, նրանց օժանդակողներին կամ դրդիչներին անձանց հայտնաբերելու համար: Այն բոլոր անձիք, ովքեր, զեկույցի հիման վրա, մասնակցել էին հանրահավաքին հարցաքննվել են և նրանք նշել են, որ կամ չեն տեսել թե ով է նկարներ և գրառումներ արել, կամ չեն ճանաչում պատասխանատու անձանց: Միայն Ռոլանդ Էգելինն է հրաժարվել հարցերին պատասխանելուց:

...Քանի որ գործի քննությունը կարճվել է, Ձեզ եմ ուղարկում պարոն Էգելինին որպես վկա հարցաքննության արձանագրության պատճեն, որի ժամկետը հետաձգվել է մի ամսից ավել, նրան հարմար ժամ ընտրելու համար:

...Ավելին, որպես վկա հարցաքննվելու ժամանակ գործը քննող դատավորին պատասխաններ տալը մերժելը ևս արդարադատության նկատմամբ անհարգալից վերաբերմունք է: Այս հանգամանքների առկայության պայմաններում ես գտնում եմ, որ նրա արարքները խախտել են 1972 թվականի հունիսի 9-ին ընդունված որոշման 106-րդ հոդվածը և հետևաբար Ձեզ խնդրում եմ Փաստաբանական Միության շրջանակներում կարգապահական վարույթ հարուցել պարոն Էգելինի նկատմամբ»:

1972 թվականի հունիսի 9-ին ընդունված թիվ 72-468 դեկրետի 104-րդ հոդվածի համաձայն 1983 թվականի հուլիսի 25-ին կայացված պարոն էզելինին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ նիստում, Փաստաբանների միության Խորհուրդը կայացրեց հետևյալ որոշումը.

«Տարածքային դատախազի պահանջով Փաստաբանների միության նախագահը 1983 թվականի մարտի 14-ին իր կարծիքն արդեն ներկայացրել էր պարոն էզելինի նկատմամբ ներկայացված առաջին մեղադրանքի կապակցությամբ: Նշված կարծիքից և պարոն էզելինի կողմից տրված հետագա պարզաբանումներից պարզ է դառնում, որ նա մասնակցել է այդ հանրահավաքին ի կատարումն Գվադելուպայի փաստաբանների արհեստակցական միության ցուցումի, որի ղեկավարներից մեկն էր հանդիսանում ինքը, բողոքելով «առանց նախնական դատական քննության անցկացման ձեռքակալման ընթացակարգի» կիրառման և «Անվտանգության և ազատության» ակտի հետագա գործողության դեմ: Դատական քննությունից չի երևում, որ պարոն էզելինը, մասնակցելով վերը նշված հանրահավաքին, խախտել է թիվ 1972 թվականի հունիսի 9-ի դեկրետի 106-րդ հոդվածով սահմանված նորմերը և որ խախտման հետևանքով նրա նկատմամբ որևէ կարգապահական պատասխանատվություն պետք է կիրառվի: Բացի դա, գործը կարճելու մասին որոշումն արդեն ուժի մեջ է մտել:

Ինչ վերաբերում է պարոն էզելինին ներկայացված երկրորդ մեղադրանքին, ապա ինչպես դատարանի քննության արդյունքներից, այնպես էլ պարոն էզելինի կողմից տրված բացատրություններից պարզ է դառնում, որ պարոն էզելինի կողմից դատավորի հարցերին չպատասխանելը պայմանավորված էին Քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածով և 1972 թվականի հունիսի 9-ի Դեկրետի 89-րդ հոդվածի դրույթներով պայմանավորված որոշակի անհանգստությամբ, այն կապակցությամբ, որ քննությունը վարող դատավորի կողմից հարցման ժամանակ հիշատակվող մարդկանցից մի քանիսին նա նախկինում իրավաբանական ծառայություն էր մատուցել:

...Պարոն էզելինը հիմնվում էր Քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի դրույթների վրա: Չնայած նրան, որ էզելինը քննությունն իրականացնող դատավորին պարզ չէր ներկայացրել հայտարարություն անելուց հրաժարվելու իր հիմնավորումները, այնուամենայնիվ դա չի հանգեցնում դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի...:

Հետևաբար, հաշվի առնելով նշված փաստերը, պարոն էզելինի բացատրությունները և սովորաբար նրա ցուցաբերած գերազանց մասնագիտական վարքագիծը, խորհուրդը որոշեց, որ պարոն էզելինի նկատմամբ կարգապահական պատասխանատվություն կիրառելու որևէ հիմք չկա:

Հիմք ընդունելով նշված պատճառները փաստաբանների միության խորհուրդը որոշեց, որ 1983 թվականի հունիսի 1-ին Գլխավոր դատախազի կողմից ուղարկված գործում չկա ոչ մի հանգամանք, ինչի հիման վրա Փաստաբանների միության խորհուրդը պարոն Ռոլանդ էզելինին ենթարկի կարգապահական պատասխանատվության: Ի լրացումն դրան, Խորհուրդը իր որոշմամբ խորհուրդ տվեց, որ Փաստաբանների միության նախագահը հիշեցնի ինչպես էզելինին, այնպես էլ փաստաբանների միության ամբողջ կազմին վարքագծի ավանդական կանոնների և որպես փաստաբան հանդես գալիս ողջամիտ դատողության կանոնների կիրառման մասին»:

2. Բաստ-Տերեյի վերաքննիչ դատարանի 1983 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումը.

Տարածքային դատախազն այս որոշումը բողոքարկեց Բաստ-Տերեյի վերաքննիչ դատարան, խնդրելով դիմումատուի նկատմամբ որպես կարգապահական պատասխանատվություն կիրառել նախագգուշացում: 1983 թվականի դեկտեմբերի 12-ին Վերաքննիչ դատարանը փոփոխեց Փաստաբանների միության խորհրդի որոշումը և պարոն էզելինին ենթարկեց ավելի ծանր կարգապահական պատասխանատվության քան նախագգուշացումը, այն է՝ նկատողության:

«...Հաստատված է այն, որ 1983 թվականի փետրվարի 12-ին պարոն Էգելինը մասնակցել է Բասսե-Տերեյի փողոցներում տեղի ունեցած հանրահավաքին: Ոստիկանության զեկույցը և կցված այլ փաստաթղթերը կասկած չեն թողնում, որ տարածքում անկախ շարժումների կողմից կազմակերպված հանրահավաքի նպատակը, վերջերս երեք ակտիվիստների նկատմամբ 15-օրյա կալանքի և վարչական շենքերին վնաս պատճառելու համար՝ 10,000 ֆրանսիական ֆրանկ տուգանք նշանակելու որոշումների դեմ բողոքելն է եղել»:

«Չի կարելի պնդել, որ պարոն Էգելինը, բացի իր անձնական ներկայությունից կամ ցուցապաստառ կրելուց, որևէ այլ ակտիվ մասնակցություն է ցուցաբերել հանրահավաքին: Այդ դեպքերից հետո դատական քննություն սկսվեց հասարակական շենքերը վնասելու, դատարաններին վիրավորելու մեջ մեղավոր, նրանց օժանդակած կամ դրդած անձանց հայտնաբերելու համար: Պարոն Էգելինը, ոստիկանության ծառայողների կողմից ճանաչված այլ անձանց հետ միասին, քննությունը վարող դատավորի կողմից հրավիրվել է որպես վկա: Հարցաքննության ընթացքում երդում տալուց հետո նա բոլոր հարցերին տվել է հետևյալ պատասխանը «Ես այդ դեպքերի կապակցությամբ ոչինչ չունեմ ասելու»:

Վերոգրյալից երևում է, որ Վերաքննիչ դատարանի փաստաբան և Փաստաբանների միության անդամ պարոն Էգելինը մասնակցել է հանրահավաքին, որը տեղի է ունեցել վերը հիշատակված հայտնի պարագաներում:

Կասկածից վեր է, որ պարոն Էգելինը, որը մասնակցում էր երթին, չէր կարող չտեսնել այդ վիրավորական ու զրպարտական նկարներն ու գրառումները, որոնք մեծ տառերով գրված էին դատարանի, դատավորների ու փաստաբանների աշխատավայրի, և վարչական այլ շենքերի պատերին, և որ նա չէր կարող չլսել վիրավորանքներն ու սպառնալիքները, որոնք որոշակիորեն ուղղված էին ոստիկանին, ինչպես նաև այլ անձանց, ներառյալ վերաքննիչ դատարանի դատավորին ուղղված վիրավորական բացականչությունները, ով տարածաշրջանում և դատական ոլորտում ընդհանրապես, շատ հայտնի անձ է:

Պարոն Էգելինն այնտեղ հանդես էր եկել որպես փաստաբան, քանզի տանում էր ցուցապաստառ, որը հրապարակում էր իր մասնագիտությունը, և որևէ կերպ չէր առանձնացրել իրեն հանրահավաքի մասնակիցների վիրավորական կամ զրպարտական գործողություններից կամ չէր լքել երթը:

Փաստաբանների միության անդամի մասնագիտական կանոններով պահանջվող վարքագծի նման հրապարակային խախտումը չի կարող արդարացվել... և առաջացնում է 1972 թվականի հունիսի 9-ի Դեկրետի 106-րդ հոդվածով նախատեսված ողջախոհության խախտում:

Բացի այդ, պարոն Էգելինը, գործը քննող դատավորի կողմից որպես վկա հարցաքննվելիս, առանց որևէ պատճառաբանության հրաժարվել է ցուցմունքներ տալ իրեն հայտնի հանգամանքների վերաբերյալ: Դրանով նա խախտել է Քրեական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները, որոնք ենթակա են պարտադիր կատարման բոլոր քաղաքացիների կողմից, և որոնց պահանջների մասին նա, որպես փաստաբան, չէր կարող տեղյակ չլինել:

Խախտելով իրավական նորմերը և ողջախոհության շրջանակները, պարոն Էգելինը այդ կերպ իր նկատմամբ կիրառելի է դարձրել 1972 թվականի հունիսի 9-ի Դեկրետի 107-րդ հոդվածով սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցները»:

«Հաշվի առնելով նրա մասնագիտական վարքագծի վերաբերյալ միանշանակ դրական կարծիքը, դատարանը գտնում է, որ որպես պատասխանատվություն պետք է կիրառվի նկատողությունը:

Ելնելով վերոգրյալից.

Դեկավարվելով 1971 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 71-1130 ակտի 22-րդ կետի և թիվ 72-468 Դեկրետի 104-րդ հոդվածների պահանջներով,

Ղատարանն իր ամբողջ կազմով հրապարակային նիստում.

Վերացրեց Բասսե-Տերեյի վերաքննիչ դատարանին առընթեր Փաստաբանների միության Գվադելուպայի դեպարտամենտի կողմից 1983 թվականի հունիսի 25-ին, իրականացված կարգապահական վարույթի արդյունքում կայացված որոշումը:

Վճռեց պարոն Էգելինի նկատմամբ կիրառել նկատողություն, որպես կարգապահական պատասխանատվություն և գումարի բռնագանձման պահանջ ներկայացնել:

3. Վճռաբեկ դատարանի 1985 թվականի հունիսի 19-ի որոշումը.

Դիմումատուն օրենքի խախտման հիմքով բողոքարկեց Վերաքննիչ դատարանի որոշումը: Նա մասնավորապես պնդում էր, որ իր նկատմամբ կիրառված կարգապահական պատասխանատվությունը խախտում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածները:

1985 թվականի հունիսի 19-ին Վճռաբեկ դատարանը Դիմումատուի բողոքը թողեց առանց բավարարման և inter alia սահմանեց հետևյալը.

«...Վերաքննիչ դատարանը ... [պարոն Էգելինին] պատասխանատվության չի ենթարկել հանրահավաքի այլ մասնակիցների կողմից կատարած հանցավոր արարքների համար: Սակայն հաստատել է, որ հանրահավաքի ընթացքում, որի նպատակը վերջերս կիրառված քրեական պատիժների դեմ բարձրաձայն բողոքելն է եղել, դատարանի շենքի բոլոր պատերին վիրավորական գրություններ են գրվել, և վիրավորանքներ են հնչել ուղղակիորեն ամբողջ դատական համակարգի, և մասնավորապես Վերաքննիչ դատարանի դատավորի նկատմամբ, որը այնտեղ հանրահայտ անձնավորություն էր և որը աշխատում էր որպես դատապաշտպան: Վերաքննիչ դատարանը նշեց, որ պարոն Էգելինը, որը մասնակցում էր հանրահավաքին որպես փաստաբան, լսել էր սպառնալիքներն ու վիրավորանքները և տեսել էր դատավորների, ինչպես նաև փաստաբանների աշխատավայր հանդիսացող դատարանի պատերին արված վիրավորական գրությունները, սակայն որևէ կերպ չէր արտահայտել իր անհամաձայնությունը այդ դեպքերի վերաբերյալ, չէր առանձնացրել իրեն այդ հանցավոր արարքներից, կամ չէր լքել երթը: Ղա իրավունք է տալիս եզրակացնել, որ նման վարքագիծը խախտում է ողջախոհության շրջանակները և առաջացնում է կարգապահական խախտում...»:

...Քրեական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածը պարտավորեցնում է ցուցմունքներ տալ բոլոր այն անձանց ովքեր վկա են ճանաչվել, իսկ 1972 թվականի հունիսի 9-ի դեկրետի 106-րդ հոդվածը օրենսդրական ակտի կամ կանոնի խախտումը որակում է որպես վարչական իրավախախտում, անկախ այն հանգամանքից, արդյոք գործը քննող դատավորը իրավունք ունի տուգանել այն վկաներին, որոնք հրաժարվում են ցուցմունքներ տալ, թե ոչ: [Վերաքննիչ դատարանը] ավելացրեց, որ պարոն Էգելինը չի հիմնավորել իր այդ վարքագիծը: Ղա իրավունք է տալիս եզրակացնել, որ պարոն Էգելինը, ով այսպիսով մերժել է բացատրության տալ առանց հիմնավորելու իր մերժումը, քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի կամ մասնագիտական գաղտնիքի պահպանության հիման վրա, կատարել է օրենքի խախտում և vis-a-vis անտեսել է քննությունը իրականացնող դատավորին, ինչն առաջացրել է կարգապահական խախտում: Վերաքննիչ դատարանն այսպիսով իր որոշումը հիմնավորեց օրենքով, իսկ բողոքում բերված փաստարկները չհիմնավորվեցին...»:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Անհրաժեշտ է մանրամասն անդրադառնալ Ֆրանսիական օրենսդրության հետևյալ դրույթներին.

A. Ընդհանուր դրույթներ

1. Քրեական օրենսգիրք

Հոդված 226, Մաս I

«Այն անձը, ով իր գործողությունների, կամ գրավոր կամ բանավոր խոսքի միջոցով հրապարակայնորեն փորձել է վարկաբեկել դատարանի որևէ գործողություն կամ որոշում՝ այնպես, որ դա կարող է վնաս պատճառել դատական համակարգի հեղինակությանն ու անկախությանը, պատժվում է ազատազրկմամբ մեկ ամսից մինչև 6 ամիս ժամանակով և/կամ տուգանքով 500-ից մինչև 90,000 ֆրանկի չափով»:

2. Քրեական դատավարության օրենսգիրք

Հոդված 105

«Քննություն իրականացնելու լիազորություն ունեցող դատավորները և ավագ ոստիկանության ծառայողները (հետաքննության անցկացնող անձինք) դատական լիազորություններն իրականացնելիս իրավունք չունեն պաշտպանվող կողմի իրավունքներից բխող գործողությունները կանխելու նպատակով որպես վկա հարցաքննել անձանց, որոնց նկատմամբ կան մեղավորությունն ապացուցող բավարար հիմքեր»:

Հոդված 109

«Քրոյր այն անձինք, ովքեր հրավիրվել են որպես վկա, պարտավոր են ներկայանալ, երդում և ցուցմունքներ տալ, համաձայն քրեական օրենսգրքի 378-րդ հոդվածի պահանջների [մասնագիտական գաղտնիքը պահպանելու պարտականություն]»:

Եթե վկան չի ներկայանում, քննությունը իրականացնող դատավորը կարող է դիմել դատախազին վկային ոստիկանության միջոցով բերման ենթարկելու միջնորդությամբ և նրա նկատմամբ տուգանք նշանակել 2500-ից մինչև 5000 ֆրանկի չափով: Եթե վկան հետագայում ներկայանում է, ներողություն է խնդրում և բացատրագիր է ներկայացնում, քննությունն իրականացնող դատավորը, տարածքային դատախազի համաձայնության առկայության դեպքում, կարող է չկիրառել տուգանքը մեղադրող կողմի ներկայացմամբ:

Այս նույն տուգանքը կարող է մեղադրողի միջնորդության հիման վրա դրվել այն վկայի վրա, որը թեև ներկայացել է, սակայն հրաժարվել է երդվելուց և ցուցմունքներ տալուց...»:

B. Փաստաբանների նկատմամբ կիրառվող դրույթները.

1. 1972 թվականի հունիսի 9-ի դեկրետը.

Հոդված 89

«Փաստաբանը, ոչ մի հանգամանքների առկայության պայմաններում իրավունք չունի խախտել փաստաբանական գաղտնիքը պահպանելու իր պարտականությունը: Փաստաբանը, մասնավորապես, պարտավոր է հարգել քրեական գործերով դատական քննության հետ կապված տեղեկությունների գաղտնիությունը՝ զերծ մնալով գործի նյութերի վերաբերյալ տեղեկություններ տարածելուց և ընթացքի մեջ գտնվող քննությունների վերաբերյալ նամակներ կամ այլ փաստաթղթեր գրելուց»:

Հոդված 104

«Փաստաբանների միության խորհուրդը, որպես կարգապահական պատասխանատվություն իրականացնող մարմին, պետք է քննադատի և պատժի այն փաստաբանին, ով հակաիրավական գործողություն կամ անգործություն են ցուցաբերում, կամ նախկին փաստաբաններին, ովքեր այդ ժամանակ եղել Փաստաբանների միության, ուսուցանողների կամ վաստակավոր փաստաբանների ցուցակում»:

Հոդված 106

«Փաստաբանների կողմից օրենքների կամ կանոնների պահանջների չկատարումը, մասնագիտական կանոնների խախտումը կամ արժանապատվության, մասնագիտական հեղինակության և ողջախիռության սահմանների ցանկացած խախտումը, նույնիսկ մասնագիտական գործունեությունից դուրս, առաջացնում է 107-րդ հոդվածով նախատեսված կարգապահական պատասխանատվություն»:

Հոդված 107

«Կարգապահական պատասխանատվության միջոցներն են՝

- Ջզուշացումը,
- Հեռացումը,
- Ոչ ավել քան երեք տարի ժամկետով փաստաբանական գործունեությամբ զբաղվելու իրավունքի կասեցում,
- Փաստաբանների և ատեստավորման ցուցակից հեռացում, կամ պատվավոր կոչումներից զրկում:

Ջզուշացումը, հեռացումը և կասեցումը կարող են հանգեցնել մինչև 10 տարով Փաստաբանների միության խորհրդի անդամության իրավունքից զրկման, եթե դա նախատեսված է կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշմամբ:

Փաստաբանների միության խորհուրդը կարող է այնուհետ որպես լրացուցիչ տույժ ցուցումներ տալ այդ կապակցությամբ, որ կարգապահական տույժի մասին տեղեկությունը հրապարակի փաստաբանների միության շրջանակներում»:

Հոդված 113

«Փաստաբանների միության նախագահը, իր հայեցողությամբ, կամ Գլխավոր դատախազի կողմից ներկայացված դիմումի կամ որևէ տուժող կողմի բողոքի հիման վրա, պետք է քննություն սկսի արարքը կատարած փաստաբանի նկատմամբ: Նա պետք է կամ դադարեցնի քննությունը կամ գործն ուղարկի Փաստաբանների միության խորհրդի քննությանը...»:

Եթե Փաստաբանների միության նախագահը բողոք է ստացել, ապա նա պետք է տեղեկացնի բողոքը ներկայացնողին: Եթե փաստերն իրեն զեկուցել է Տարածքային դատախազը, ապա Փաստաբանների միության նախագահը պետք է հղում կատարի նամակի վրա...»:

2. 1982 թվականի հունիսի 15-ի «Դատաքննության ընթացքում փաստաբանի մասնագիտական վարքագծի կանոնների խախտման դեպքում իրականացվող վարույթի մասին» ակտ.

Փաստաբանները պարտավորված են երդմամբ, որը նրանք տալիս են իրենց պարտականությունների կատարման անցնելիս: Երդման տեքստը սահմանված է 1982 թվականի հունիսի 15-ի ակտի 1-ին բաժնում.

«Ես երդվում եմ որպես փաստաբան պաշտպանություն իրականացնել ու խորհրդատվություն տալ արժանապատվորեն, բարեխղճորեն, անկախ և մարդասիրության դրսևորմամբ»:

Մինչև այդ ակտն ուժի մեջ մտնելը երդման տեքստը հետևյալն էր.

«Ես երդվում եմ որպես փաստաբան պաշտպանություն իրականացնել ու խորհրդատվություն տալ արժանապատվորեն, բարեխղճորեն, անկախ և մարդասիրության դրսևորմամբ, հարգելով դատարաններին, պետական իշխանություններին և Փաստաբանների միության կանոնները, չասել կամ չհրապարակել որևէ բան, որը կհակասի օրենսդրական ակտերին, կանոններին, էթիկային, պետական անվտանգությանը կամ հասարակական կարգին:» (1972 թվականի հունիսի 9-ի Դեկրետի 23-րդ հոդված):

Այն փաստաբանը, ով երդում էր տվել մինչև 1982 թվականի հունիսի 15-ը համարվում է, որ երդումը տվել է գործող ակտի համաձայն:

1964 թվականի հունիսի 9-ի իր վճռում Վճռաբեկ դատարանը (առաջին քաղաքացիական պալատ) սահմանեց, որ փաստաբանի երդումը «նաև [պարտավորեցնում] է նրան բոլոր դեպքերում չչեղվել դատարանների ու պետական իշխանության նկատմամբ հարգանքից:...» (Juris-Classeur p riodique 1964, II, no. 13797, note by J.A.)

Ավելին, 1965 թվականի հունիսի 30-ի իր վճռում Վճռաբեկ դատարանը սահմանեց, որ փաստաբանը, ունենալով իրավունքների ցանկացած խախտման դեմ բողոքելու իրավունք, պետք է ձեռնպահ մնա ցանկացած հրապարակումից, որը կարող է ազդել դատավորի հեղինակության ու հայեցողության վրա:

ՄԱՍ VI.

**ՀԱՎԵԼՎԱԾ Ե -- ԷԶԵԼԻՆՆ ԸՆԴԴԵՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՂԱՏԱՐԱՆԻ ԿԱՅԱՑՐԱԾ ՎՃՈՒ ՈՉ-ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Քաղվածք վճռից

ՎԱՐՈՒՅԹԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

- 28. 1985 թվականի հոկտեմբերի 16-ին Հանձնաժողովին ուղղված իր գանգատում (թիվ 11800/85), պարոն Էգելինը հղում էր կատարել Կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածներին: Նա նշել էր, որ իր նկատմամբ կիրառված կարգապահական պատասխանատվությունը լրջորեն միջամտել էր իր արտահայտվելու ազատության և խաղաղ հավաքների ազատության իրավունքների իրականացմանը:
- 29. Հանձնաժողովը գանգատը ընդունելի հայտարարեց 1989 թվականի մարտի 13-ին: 1989 թվականի դեկտեմբերի 14-ի իր որոշմամբ (կայացված 31-րդ հոդվածի համաձայն) Հանձնաժողովը (ձայների 50-ը 6-ի հարաբերակցությամբ) կարծիք հայտնեց, որ առկա է 11-րդ հոդվածի խախտում և 10-րդ հոդվածի հետ կապված առանձին հարցեր չեն ծագում (միաձայն կերպով): Հանձնաժողովի կարծիքի ամբողջ տեքստը և դրանում ներառված տարբերվող կարծիքները ներկայացված են որպես սույն վճռի հավելվածներ:

ՂԱՏԱՐԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- 30. 1990 թվականի նոյեմբերի 20-ին կայացած լսումների ընթացքում Կառավարության ներկայացուցիչը պնդեց իր հուշագրում ներկայացված մոտեցումները: Հուշագրում Ղատարանից խնդրվել էր վճռել, որ 11-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել և հաստատել Հանձնաժողովի տեսակետն առ այն, որ 10-րդ հոդվածի հետ կապված առանձին հարցեր չեն առաջացել:
Դիմումատուի ներկայացուցիչը խնդրեց Ղատարանից վճռել, որ տեղի է ունեցել 10-րդ և 11-րդ հոդվածներով երաշխավորված արտահայտվելու ազատության և խաղաղ հավաքների ազատության իրավունքների խախտում և իր վստահորդին տրամադրել փոխհատուցում:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐ

- 31. Դիմումատուն գտնում էր, որ Բասսե-Տերեյի վերաքննիչ դատարանի կողմից իր նկատմամբ նշանակված կարգապահական պատասխանատվությունը անհամատեղելի է Կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածներով պաշտպանվող արտահայտվելու ազատության և խաղաղ հավաքների ազատության հետ:
- 32. Կառավարությունը նշեց, որ այս սանկցիան նպատակ ուներ նաև պատժել պարոն Էգելինին՝ գործը վարող դատավորին ցուցմունքներ տալուց հրաժարվելու համար: Կառավարությունը քննադատեց Հանձնաժողովին այն կարծիքի համար, թե խնդիրը միայն դիմումատուի հանրահավաքին մասնակցելն է եղել:
- 33. Դիմումատուն, իրականում, պատասխանատվության էր ենթարկվել ո՛չ հանրահավաքի մասնակիցների վիրավորական ու գրպարտական գործողություններին անհամաձայնություն չհայտնելու, ո՛չ նրանցից իրեն առանձնացնելու նպատակով երթին իր մասնակցությունը չդադարեցնելու և ո՛չ էլ ցուցմունքներ տալուց հրաժարվելու համար, չնայած նա չէր վիճարկել Քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածը կամ մասնագիտական գաղտնիքը (տե՛ս 20 և 21 կետերը): Այնուամենայնիվ նա քննությունն իրականացնող դատավորի կողմից կանչվել էր հանրահավաքին մասնակցելու հետևանքով: Ցուցմունքներ

տալուց հրաժարվելու խնդիրը, որն ինքնին 10-րդ և 11-րդ հոդվածների շրջանակների մեջ չի մտնում, երկրորդական նշանակություն ունի: Բացի դրանից, պետք է նշել, որ պարոն էգելինը քննությունն իրականացնող դատավորի ներկայությամբ կատարյալ լռություն չի պահպանել. նա նշել է որ հարցի հետ կապված ոչինչ չունի ասելու, իսկ դատավորը պատշաճ չի համարել օգտվել Քրեական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 3-րդ կետով իրեն վերապահված իրավասությունից (տե՛ս 15, 20 և 21-րդ կետերը):

I. 10-րդ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱՒՏՈՒՄԸ

34. Իր պնդումներից մեկը դիմումատուն կատարել էր, հիմնվելով 10-րդ հոդվածի վրա, որը սահմանում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչնդոտում պետություններին սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային եւ կինեմատոգրաֆիական կազմակերպությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաև այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

35. Տվյալ գործում սույն նորմը 11-րդ հոդվածի նկատմամբ պետք է դիտարկվի որպես *lex generalis*, *a lex specialis*, հետևաբար անհրաժեշտություն չկա այն դիտարկել առանձին: Այս հարցում Դատարանը համաձայնվել է Հանձնաժողովի հետ:

II. 11-րդ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱՒՏՈՒՄԸ

36. Վիճարկվող հիմնական հարցը վերաբերում է 11-րդ հոդվածին, որը սահմանում է.

«1. Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի խաղաղ հավաքների ազատության եւ ուրիշների հետ միավորվելու ազատության, ներառյալ արհմիություններ ստեղծելու եւ իր շահերի պաշտպանության համար դրանց անդամակցելու իրավունքը:

2. Այդ իրավունքների իրականացումը ենթակա չէ ոչ մի տեսակի սահմանափակումների, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական անվտանգության ու հասարակական անդորրի, անկարգություններն ու հանցագործությունները կանխելու, այլ անձանց առողջությունն ու բարոյականությունը կամ նրանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչնդոտում օրինական սահմանափակումներ մտցնել զինված ուժերի, ոստիկանության եւ պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման վրա»:

37. Չնայած իր ինքնուրույն դերին և կիրառության առանձին ոլորտին, այս գործով, 11-րդ հոդվածը ևս պետք է դիտարկել 10-րդ հոդվածի լույսի ներքո (Տե՛ս Յանգի Ջեյմսի և Վեբսթերի գործով 1981թ. օգոստոսի 13-ի վճիռը, շարք A համար 44. կետ 23 կետ 57): 10-րդ հոդվածով երաշխավորված անձնական կարծիքի պաշտպանությունը խաղաղ հավաքների ազատության տարրերից մեկն է, ինչպես և նախատեսված է 11-րդ հոդվածով:

A. Արդյո՞ք տեղի է ունեցել միջամտություն խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրականացմանը

38. Կառավարության պնդմամբ, պարոն Էզելինի կողմից իր արտահայտվելու ու խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրականացմանը որևէ միջամտություն տեղի չի ունեցել. նա հնարավորություն է ունեցել առանց խոչընդոտի մասնակցել երթին և հրապարակայնորեն արտահայտել իր համոզմունքները, իր մասնագիտական կարգավիճակին և ցանկությանը համապատասխան: Նա կարգապահական պատասխանատվության է ենթարկվել միայն միջոցառումից հետո, իր անձնական վարքագծի արդյունքում, որը նրա մասնագիտական պարտականություններին անհամապատասխան էր դիտվել:

39. Ղատարանը չի ընդունում այս պնդումը: 11-րդ և 10-րդ հոդվածների 2-րդ մասերում նշված «սահմանափակում» հասկացությունը չի կարող մեկնաբանվել որպես այնպիսի միջոցների կիրառում, ինչպիսին է կարգապահական պատասխանատվությունը՝ անկախ այն հանգամանքից դա կիրառվել է հավաքից առաջ թե՛ հետո (տես օրինակ, մասնավորապես ինչ վերաբերում է 10-րդ հոդվածին՝ Հենդիսայդի գործով 1976 թվականի դեկտեմբերի 7-ի վճիռը՝ շարք A թիվ 24, էջ 21, կետ 43 և Մյուլլերը և մյուսների գործով 1988 թվականի մայիսի 24-ի վճիռը, շարք A, թիվ 133, էջ. 19, կետ 28):

40. Երկրորդ, Կառավարությունը նշեց, որ չնայած պարոն Էզելինի վարքագծի ու մտադրությունների խաղաղ բնույթին, կիրառված պատասխանատվության միջոցը որևէ կերպ չի միջամտել նրա խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրականացմանը, քանի որ հանրահավաքն արդեն ավարտվել էր:

Հանձնաժողովի կարծիքով, դիմումատուին չեն կարող վերագրվել որևէ ոչ խաղաղ բնույթի մտադրություններ:

41. Ղատարանը նշում է, որ խնդրո առարկա հանրահավաք անցկացնելու վերաբերյալ նախնական ծանուցում է տրվել և որ այն չէր արգելվել: Մասնակցելով դրան, դիմումատուն օգտվել էր խաղաղ հավաքների ազատության իր իրավունքից: Ավելին, ոչ Բասսե-Տերեյի գլխավոր ոստիկանապետի զեկույցը և ոչ էլ այլ փաստեր ցույց չեն տալիս, որ պարոն Էզելինն անձամբ որևէ մեկին սպառնացել է կամ պատերիս նկարներ ու գրառումներ է արել:

Վերաքննիչ դատարանն ապացուցված համարեց «հանրահավաքի մասնակիցների վիրավորական ու զրպարտող գործողություններին անհամաձայնություն չհայտնելու, կամ նրանցից իրեն [առանձնացնելու] նպատակով երթին իր մասնակցությունը չդադարեցնելու» մեղադրանքը (տե՛ս կետ 20): Վճռաբեկ դատարանը նշեց, որ նա երբևէ «չի արտահայտել իր անհամաձայնությունը այդ արարքների վերաբերյալ կամ լքել երթը, իրեն այդ հանցավոր արարքների հետ չնույնացնելու նպատակով (տես կետ 21)»:

Ուստի, Ղատարանը գտնում է, որ այս դեպքում առկա էր միջամտություն դիմումատուի խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրականացմանը:

B. Արդյո՞ք միջամտությունն արդարացված էր.

42. Հետևաբար պետք է որոշել, արդյոք կիրառված պատասխանատվության միջոցը «նախատեսված է եղել օրենքով», հետապնդել է 11-րդ հոդվածի 2-րդ կետով

նախատեսված իրավաչափ նպատակներից մեկը կամ մի քանիսը, և դրանց հասնելը «անհրաժեշտ է եղել ժողովրդական հասարակությունում»:

1. «Նախատեսված է եղել օրենքով»

43. Դիմումատուն պնդում էր, որ 1972 թվականի հունիսի 9-ի Դեկրետի 106-րդ հոդվածը նպատակ չի ունեցել սահմանափակել փաստաբանների հավաքների ազատության իրավունքը, ավելին, «ողջախոհության շրջանակների ... խախտում» բառերի ընդհանուր բնույթը անհնար էր դարձնում կանխատեսել խախտման առաջացումը և թույլ էր տալիս ցանկացած պատասխանատվության միջոցի կիրառում դեպքից հետո:
44. Ի հակադրություն Կառավարությունը նշում էր, որ այս դրույթը «դատարանի ծառայողներ» հանդիսացող փաստաբաններից (auxiliaires de la justice), պահանջում է հարգել իրավաբանական ու էթիկական բնույթ ունեցող մի շարք մասնագիտական սկզբունքներ: Այս դրույթը բավարար հստակություն ուներ, որտեղ պատժվող արարքը հակադրվում էր մասնագիտական կանոններին, ինչպես տվյալ գործում:
45. Դատարանի վճիռների համաձայն, նորմը չի կարող համարվել օրենք, քանի դեռ այն ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի քաղաքացիները անհրաժեշտության դեպքում հնարավորություն ունենան օգտվելով խորհուրդներից, հանգամանքների ողջամիտ իրականացմամբ կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող են առաջացնել տվյալ գործողությունը (այլ աղբյուրների շարքում տե՛ս վերն արդեն հիշատակված Մյուլլերը և Ուրիշների գործով վճիռը, Շարք A թիվ 133, էջ 20, կետ 29): Փորձն այնուամենայնիվ ցույց է տալիս, որ անհնար է օրենքի ձևակերպումներում հասնել կատարյալ հստակության, մասնավորապես այն բնագավառներում, որտեղ իրավիճակը փոխվում է հասարակության գերիշխող հայացքների արդյունքում (տե՛ս նույն տեղում):

Սույն գործով վիճարկվող կարգապահական պատասխանատվության իրավական հիմքում ընկած են միայն փաստաբանների մասնագիտական գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորող հատուկ կանոնները: 1972 թվականի հունիսի 9-ի համապատասխան Դեկրետի 106-րդ հոդվածը միանշանակորեն սահմանում է, որ յուրաքանչյուր փաստաբան, նույնիսկ իր մասնագիտական գործունեությունից դուրս, ունի հատուկ պարտավորություններ (տե՛ս կետ 25): և Վճռաբեկ դատարանը վճռել էր, որ դրանք ներառում են նաև հարգանքը դատական իշխանությունների նկատմամբ (տե՛ս կետ 27): Հետևաբար միջամտությունը «նախատեսված է եղել օրենքով»:

2. Իրավաչափ նպատակ

46. Դիմումատուն պնդում էր, որ սանկցիան չէր հետապնդում իրավաչափ նպատակ. դրա արդյունքում կանխվել էր նրա կողմից իր գաղափարների ու արհմիութենական պահանջների արտահայտումը: Մյուս կողմից Կառավարությունը նշում էր, որ դրա նպատակը «անկարգությունների կախումն» է եղել:
47. Փաստերից ակնհայտ է դառնում, որ պարոն Էգելինը պատասխանատվության էր ենթարկվել, քանի որ չէր առանձնացրել իրեն հանրահավաքի ընթացքում տեղ գտած անօրինական միջադեպերից: Ինչպես Հանձնաժողովը նշեց, իշխանությունների նման վարքագիծը պայմանավորված էր եղել այն փաստով, որ դիմումատուն, որպես փաստաբան, հավանության էր արժանացրել նման արարքները և ակտիվորեն աջակցել էր դրանց: Հետևաբար, միջամտությունը հետապնդում էր «անկարգությունները կանխելու» իրավաչափ նպատակ:

3. Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում

48. Դիմումատուի պնդմամբ, միջամտությունը, որի դեմ ինքը բողոքում է «անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությունում»: Պահանջել, որպեսզի ինքը լքի երթը՝ հանրահավաքի այլ մասնակիցների կողմից կատարված արարքներին իր անհամաձայնությունը հայտնելու նպատակով, նշանակում է իրեն զրկել խաղաղ հավաքների ազատության իր իրավունքից:
49. Կառավարությունը մյուս կողմից պնդեց, որ վիճարկվող միջոցն իսկապես համապատասխանում էր առկա «սոցիալական սուր պահանջին» նկատի ունենալով տեղական առանձնահատկությունները և պարոն էզելինի կարգավիճակը՝ որպես փաստաբան: Անհամաձայնություն չհայտնելով հանրահավաքի ընթացքում կատարված անօրինական միջադեպերին, դիմումատուն ipso facto հաստատել է դրանք: Բացի այդ, նրանք պնդում էին, որ դատական մարմինների համար էական նշանակություն ուներ արձագանքել «դատարանի ծառայողի» (auxiliaire de la justice) այնպիսի վարքագծին, որը լրջորեն վնասել էր արդարադատության հեղինակությանը և դատարանի որոշումների նկատմամբ հարգանքին: Վերջապես, այն երկու մասնագիտական պարտականությունների խախտման ծանրությունն, ինչում մեղադրվում էր դիմումատուն, արդարացնում էր նրա նկատմամբ կիրառված թեթև սանկցիան և նշանակված պատիժը, որը չէր խախտում Դատարանի վճիռներում սահմանված համաչափության սկզբունքը:
50. Հանձնաժողովը սահմանեց, որ պարոն էզելինի վարքագծի հնարավոր արդյունք հանդիսացող տպավորության հիման վրա կիրառված կարգապահական պատասխանատվությունը համատեղելի չէր «սուր սոցիալական պահանջի» խիստ չափանիշի հետ և հետևաբար չի կարող համարվել «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»:
51. Դատարանը կարգապահական պատասխանատվության հարցը քննարկեց գործի, որպես մի ամբողջություն, լույսի ներքո, որոշելու համար մասնավորապես, արդյո՞ք դա համաչափ էր հետապնդվող իրավաչափ նպատակին, հաշվի առնելով այս պարագայում սերտորեն առնչվող խաղաղ հավաքների ազատության և արտահայտվելու ազատության իրավունքների հատուկ կարևորությունը:
52. Համաչափության սկզբունքը պահանջում է, որ արդարացի հավասարակշռություն ապահովվի 11-րդ հոդվածի 2-րդ կետով թվարկված իրավաչափ նպատակների և փողոցում կամ հասարակական այլ վայրերում հավաքված մարդկանց կողմից իրենց կարծիքները բառերով, ժեստերով կամ նույնիսկ լռությամբ արտահայտելու միջև: Հավասարակշռության ձգտումը չի կարող արդյունքում հանգեցնել նրան, որ նման դեպքերում, փաստաբանները, վախենալով կարգապահական պատասխանատվությունից, խուսափեն իրենց համոզմունքներն արտահայտելուց:
53. Ակնհայտ է, որ պարոն էզելինի նկատմամբ նշանակվել էր 1972 թվականի հունիսի 9-ի Դեկրետի 107-րդ հոդվածով նախատեսված առավել մեղմ պատասխանատվության միջոցը (տե՛ս կետ 25-ը). այն հիմնականում բարոյական ազդեցություն ուներ, քանի որ նրա փաստաբանական գործունեությամբ զբաղվելու կամ Փաստաբանների խորհրդի անդամության հարցում որևէ արգելք, անգամ ժամանակավոր, չէր առաջացնում: Այնուամենայնիվ, Դատարանը որոշեց, որ չարգելված խաղաղ հավաքին, տվյալ դեպքում հանրահավաքին, մասնակցելու անձի ազատությունը այնքան կարևոր է, որ այն չի կարող սահմանափակվել որևէ կերպ, նույնիսկ փաստաբանի համար, քանի որ նա անձամբ որևէ անօրինական արարք չի կատարել:
- Կարճ ասած, նույնիսկ կիրառված նվազագույն պատասխանատվության միջոցը չի կարող դիտվել «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»: Հետևաբար դա հակասում է 11-րդ հոդվածին:

III. 50-րդ ՀՈՂՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

54. 50-րդ հողվածը սահմանում է,
«Եթե Ղատարանը գտնում է, որ իրավապահ մարմինների կամ Բարձր պայմանավորվող կողմի այլ իշխանությունների որոշումները կամ գործողությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն հակասում են Կոնվենցիայից բխող պարտավորություններից, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Ղատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Այս դրույթի հիման վրա դիմումատուն պահանջում էր իր կրած վնասների և կատարած ծախսերի փոխհատուցում:

A. Վնասը

54. Պարոն Էգելինը պահանջում էր բարոյական վնասի փոխհատուցում 25,000 ֆրանսիական ֆրանկ գումարի չափով, այն հիմքով, որ վիճարկվող պատասխանատվության մասին իրավական ուղղվածություն ունեցող թերթերի և տեղական հրատարակությունների հրապարակումները վնասել են իր հեղինակությանը և շահերին:
55. Կառավարությունը հարցը թողեց Ղատարանի հայեցողությանը այն դեպքում, եթե վերջինս ապացուցված համարի վնասը հասցված լինելու փաստը:
Հանձնաժողովի ներկայացուցիչը նշեց, որ փոխհատուցում պետք է տրվի, սակայն դրա չափի վերաբերյալ առաջարկություն չներկայացրեց:
56. Գործով կայացված որոշումն առ այն, որ առկա է 11-րդ հողվածի խախտում, թույլ է տալիս պարոն Էգելինին ստանալ արդարացի փոխհատուցում ենթադրյալ վնասների համար:

B. Ծախսեր և ծախսեր

57. Դիմումատուն նաև պահանջում էր փոխհատուցել Վճռաբեկ դատարանում (15,000 ֆրանկ) և Կոնվենցիայի մարմիններում գործի քննության հետ կապված իր կատարած դատական և այլ ծախսերը (Հանձնաժողով՝ 10,000 ֆրանկ, Ղատարան 15,000 ֆրանկ)՝ 40,000 ֆրանկ գումարի չափով:
Կառավարության կամ Հանձնաժողովի ներկայացուցչի կողմից վերապահումներ չեն արվել:
58. Ղատարանը բավարարեց դիմումատուի պահանջն ամբողջությամբ՝ իր տիրապետման տակ գտնվող տեղեկատվության և գործի դեպքերին առընչվող իր վճիռների հիման վրա արդար գնահատում կատարելու արդյունքում:

ԵՆԵՆՈՎ ՎԵՐՈՎՅԱԼԻՑ ԴԱՏԱՐԱՆԸ

1. Միաձայն վճռեց, որ կարիք չկա առանձին քննություն անցկացնել 10-րդ հողվածի մասով:
2. Վեցն ընդդեմ երեքի ձայների հարաբերակցությամբ վճռեց, որ առկա է 11-րդ հողվածի խախտում:
3. Միաձայն վճռեց, որ սույն վճիռն ինքնին սահմանում է հնարավոր բարոյական վնասի արդարացի փոխհատուցում:

4. Միաձայն վճռեց, որ պատասխանող մասնակից պետությունը պետք է դիմումատուին փոխհատուցի 40,000 ֆրանկ (քառասուն հազար ֆրանսիական ֆրանկ) ծախսերի և ծախքերի համար:

Կազմված է անգլերեն ու ֆրանսերեն և հրապարակվել է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում (Ստրասբուրգ) 1991 թվականի ապրիլի 26-ին կայացած դռնբաց դատական նիստում:

Ստորագրել է Նախագահ՝ Ռոլվ Ռիստդալ
Ստորագրել է Քարտուղար՝ Մարկ-Անդրե էյսսեն

51-րդ հոդվածի 2-րդ կետի և Դատարանի կանոնակարգի 53-րդ կանոնի 2-րդ կետի համաձայն սույն վճռին կցվում են հետևյալ հատուկ կարծիքները.

- ա) Պարոն Ռիստդալի մասնակի տարբերվող կարծիքը,
- բ) Պարոն Մաթչերի մասնակի տարբերվող կարծիքը,
- գ) Պարոն Պետիտի տարբերվող կարծիքը,
- դ) Պարոն Դե Մեյերի համընկնող կարծիքը:

ՂԱՏԱԿՈՐ ՌԻՍՏԴԱԼԻ ՄԱՍՆԱԿԻ ՏԱՐԲԵՐՎՈՂ ԿԱՐԾԻՔԸ

Ես համաձայն եմ, որ կարիք չկա գործը քննել 10-րդ հոդվածի մասով և որ առկա է միջամտություն պարոն Էզելինի՝ 11-րդ հոդվածով երաշխավորված խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրականացմանը: Ես նաև համաձայն եմ, որ միջամտությունը նախատեսված է եղել օրենքով և հետապնդել է 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված՝ «անկարգությունները կանխելու» իրավաչափ նպատակ: Բայց զխավոր հարցը հետևյալն է, ա՞րդյոք այս միջամտությունը անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում: Այս առումով է, որ իմ տեսակետը տարբերվում է Դատարանի մեծամասնության տեսակետից:

Ֆրանսիայի իրավաբանների կարգապահական կանոնագիրքը կարող է տարբեր լինել այլ երկրների նման կանոնագրքերից, մասնավորապես 1972 թվականի հունիսի 9-ի Դեկրետի 106-րդ հոդվածով սահմանված արժանապատվության, մասնագիտական հեղինակության և ողջախոհության սահմանները խախտելու համար պատասխանատվության դեպքերում: Այնուամենայնիվ ենթադրվում է, որ պետությունները պետք է օգտվեն իրենց հայեցողության սահմաններից այն դեպքերում, երբ որոշվում է մասնագիտական վարքագծի կանոնների՝ ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ լինելու և կոնկրետ գործում դրանց խախտված լինելու հարցերը:

Սակայն Վճռաբեկ դատարանի կողմից հաստատված Վերաքննիչ դատարանի դիրքորոշման համաչափության վերաբերյալ կարծիքները կարող են տարբեր լինել: Ես չեմ կարող ասել, որ պարոն Էզելինի վարքագծում տեղ գտած երկու մասնագիտական թերությունների համար նկատողության տեսքով կիրառված կարգապահական պատասխանատվությունը դուրս է գալիս ազգային իշխանությունների հայեցողության շրջանակներից: Անհնար է չնկատել, որ պատասխանատվության տեսակների տվյալ դեպքի համար կիրառելի սանդղակում նկատողությունը հանդիսանում է պատասխանատվության ամենաթեթև տեսակներից մեկը, որը տվյալ գործում չի հանգեցնում դիմումատուի կողմից փաստաբանական գործունեությամբ զբաղվելու ազատության որևէ սահմանափակման:

Հետևաբար ես եզրակացնում եմ, որ տվյալ գործով 11-րդ հոդվածի խախտում առկա չէ:

**ԴԱՏԱՎՈՐ ՄԱԹՉԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՏԱՐԲԵՐՎՈՂ ԿԱՐԾԻՔԸ
(Թարգմանություն)**

Եվրոպական կոնվենցիան մասնագիտական էթիկային վերաբերող ուղղակի դրույթներ չի պարունակում. այն թողնում է այդ հարցը անդամ-պետությունների հայեցողությանը: Բնականաբար, համապատասխան ազգային կանոնները պետք է համապատասխանեն Կոնվենցիային, սակայն անդամ-պետությունները այս ոլորտում հայեցողության զգալի շրջանակ ունեն:

Տարբեր երկրներում Փաստաբանների միության անդամների վարքագծի վերաբերյալ մոտեցումը տարբերվում են: Ֆրանսիայի համապատասխան կանոնների համաձայն, փաստաբանների միության անդամները պարտավոր են «ողջախոհություն» պահպանել: Նույն մտքին, թեև այլ կերպ շարադրված, կարող ենք հանդիպել եվրոպական տարբեր երկրների օրենսդրություններում կամ մասնագիտական կանոններում:

Իմ կարծիքով գործի նյութերից (հրապարակային մասնակցություն հանրահավաքին, որի ընթացքում տաքզուխները դատավորներին և ոստիկանությանը սպառնացող կամ վիրավորող կանչեր և շենքերի վրա նկարներ ու գրառումներ էին անում, դրանով իսկ նույնացնելով իրեն հանրահավաքի մասնակիցների հետ. իրեն հարցաքննող դատավորի նկատմամբ վիրավորական վարքագծի դրսևորում) երևում է, որ կասկած չկա, որ դիմումատուն կոպտորեն խախտել է «ողջախոհություն» ցուցաբերելու իր պարտականությունը, որը նրան, որպես փաստաբանի, պարտավորեցնում են մասնագիտական կանոնները:

Մնում է չորոշված, արդյո՞ք մեր օրերի լիբերալ հասարակությունում փաստաբանների միության անդամը դեռ պարտավոր է պահպանել «ողջախոհություն», այնպես, ինչպես դա ես եմ հասկանում, կամ օգտագործելով Կոնվենցիայի դրույթները (կամ Դատարանի վճիռները), արդյո՞ք «ողջախոհության» պահանջին չհամապատասխանող վարքագծի համար կիրառված պատասխանատվության տեսակը (որը բոլոր դեպքերում նվազագույնն էր և հետևաբար տվյալ դեպքում համաչափ) «անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում»:

Դատարանի մեծամասնությունը այդպես չի մտածում. վերը բերված պատճառներով ես չեմ կարող կիսել նրանց տեսակետը:

**ԴԱՏԱՎՈՐ ՊԵՏԻՏԻ ՄԱՍՆԱԿԻ ՏԱՐԲԵՐՎՈՂ ԿԱՐԾԻՔԸ
(Թարգմանություն)**

Ես չեմ քվեարկել մեծամասնության հետ հետևյալ պատճառներով.

Ես կարծում եմ, որ մեծամասնությունը ինչպես և Հանձնաժողովը, սահմանափակել է իրեն 11-րդ հոդվածի հետ կապված հարցում: Այնուամենայնիվ, կար նաև երկրորդ տեսանկյուն.

1. Ինչ վերաբերվում է հանրահավաքների ազատությանը և 11-րդ հոդվածի 2-րդ մասի մեկնաբանությանը, հստակ չէ այն, որ միջոցառումից հետո կիրառված նվազագույն, սոսկ բարոյական, սանկցիան խոչընդոտ առաջացրեց հանրահավաքի անցկացման ազատության իրականացման համար:

Իմ կարծիքով, մեծամասնությունը բավարար ուշադրություն չի դարձրել հայեցողության սահմաններին/համաչափությանը (տե՛ս, inter alia, Հենդիսայրը, Սյուլերը և մյուսների, Մարկ Ինթերի գործերը):

2. Հաջորդ տեսանկյունը բարձրացվել էր Ֆրանսիական կառավարության գործակալի կողմից իր հուշագրում և լսումների ընթացքում. կարո՞ղ է պետությունը դատարանի և փաստաբանների միջև կազմակերպել մասնագիտական էթիկայի հետ կապված հարաբերությունները, այնպես, որ հանրահավաքի կամ այլ առանձին դեպքում հնարավորություն ունենա գնահատել դատարանի

ծառայողների վարքագիծը փաստաբաններից ու դատարանից պահանջվող ողջախոհության պահպանման տեսանկյունից:

Եթե այո, ապա համապատասխանում են կարգապահական վարույթի և ներպետական օրենսդրության նորմերի արդյունքում կիրառված միջոցները Կոնվենցիային՝ հայեցողության սահմանների/համաչափության տեսանկյունից:

Դատարանի հիմնավորումներում ես չեմ կարողացել գտնել այս երկու հարցերի որևէ որոշակի պատասխան:

Նախ և առաջ, իմ կարծիքով, մեծամասնությունը չբացատրեց իր եզրահանգումն այն կապակցությամբ, որ դեպքին հաջորդող պատասխանատվության կիրառումը կարող է բավարար լինել անձին ավելի ուշ այլ հանրահավաքի մասնակցելու որոշումից հետո պահելու համար: Հետևաբար, ցանկացած դեպքում անհրաժեշտ է անդրադարձնալ համաչափության խնդրին. այն է՝ երբ է նման հաջորդող պատասխանատվությունը դառնում անհամաչափ: Դատարանը կարող էր ընդունել այն մոտեցումը, որը կիրառել էր Ալբերտը և Լե Կոմպտն ընդդեմ Բելգիայի (Albert and Le Compte v. Belgium) գործով վճռի հիմնավորումներում, երբ սահմանում էր 6-րդ հոդվածի կիրառելիության հարցը քաղաքացիական իրավունքների և պարտականությունների նկատմամբ: Ավելին, վիճարկվող սանկցիան սահմանափակող, թե պարզապես բարոյական բնույթ ուներ:

Սահմանափակման՝ իրավական և հասարակության շահերի նպատակի նկատմամբ համաչափ լինելու պահանջը ենթադրում է դիտարկվող տարրերի ուղղակի համաչափություն: Դատարանը սովորաբար համաչափությունը գնահատում է պետությունների հայեցողության շրջանակի լույսի ներքո, այնուամենայնիվ, սույն գործով վճռի հիմնավորումներում, ինչպես սոցիալական սուր պահանջի այնպես էլ ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտության առումով ես չեմ գտնում այս ընդունված չափանիշները: Սա հանրահավաքների ազատության հիմնական դիտարկումն է, որին մասնավորապես անդրադարձնում են Հանձնաժողովը և Դատարանը: Ինքնին հանրահավաքի հետ կապված իշխանությունների վարքագծին Կոնվենցիայի իմաստով որևէ քննադատություն չի ուղղվել. Դատարանը 11-րդ հոդվածը մեկնաբանել է հաջորդող պատասխանատվության տեսանկյունից:

Այնքանով, որքանով, որ Դատարանը նշում է, որ 10-րդ հոդվածը 11-րդ հոդվածի *lex specialis*, նկատմամբ պետք է համարվի *lex generalis*, որից բխում է, որ անհրաժեշտություն չկա 10-րդ հոդվածը դիտարկել առանձին, պետք է նշել, որ 10-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է հետևյալը.

«Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաև այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

Նույն մոտեցումը պետք է առկա լինի նաև համաչափության վերլուծությունում:

Վճռի 52-րդ կետում Դատարանը հղում է կատարում այնպիսի արդարացի հավասարակշռություն սահմանելու անհրաժեշտությանը, որը կբացառի անձանց կողմից իրենց հանդուժումները արտահայտելուց խուսափելը. 53-րդ կետում ասվում է, որ հավաքին կամ հանրահավաքին մասնակցելու անձի ազատությունը չի կարող սահմանափակվել, քանի դեռ նա անձամբ որևէ անօրինական արարքն չի կատարել: Սույն հիմնավորման առաջարկը ենթադրում է նաև համաչափության գնահատում կամ այն հարցի քննություն, թե ի՞նչն է անօրինական: Սա հստակորեն չէր սահմանվել:

Անկասկած ճշմարիտ է, որ վճռի շրջանակները սահմանափակված են Ղատարանին ներկայացված գործով, և այն հանգամանքով, որ հանրահավաքին ազատ մասնակցելու իրավունքի վերաբերյալ Ղատարանի իրականացրած քննությունը կլանել է մնացած բոլոր խնդիրները: Ղատարանը գործի փաստերի համառոտագրում նշել է, որ հանրահավաքի անցկացմանը, չնայած դրա խնդրահարույց բնույթին, որևէ խոչընդոտներ չեն ստեղծվել, հարուցված քրեական գործով վարույթը կարճվել է, ինչի մասին որոշումը չի բողոքարկվել և այդ քրեական գործը դատարանը չի քննել:

Խնդրահարույց կարող է թվալ նաև վճռի այն հիմնավորումները, որոնցով մեծամասնությունը չընդունեց Կառավարության փաստարկները ցուցմունքներ տալուց հրաժարվելու վերաբերյալ (Քրեական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդված), ելնելով այն տեսակետից, որ որպես վկա կանչվելը հանրահավաքի հետևանք էր:

109-րդ հոդվածի պահանջները կիրառվում են անկախ դատավորի կողմից կանչվելը տեղի ունեցած փաստերի որակումից:

Այս առումով նախընտրելի կլիներ ուշադրություն դարձնել իրավաբանների առանձնահատուկ կարգավիճակին և նման դեպքերում Ֆրանսիայում առկա պրակտիկային:

Ինձ համար նաև ցավալի է թվում այն, որ մեծամասնությունը չի անդրադարձել նման ոլորտում պետության հայեցողության շրջանակներին, որոնք բխում են 10-րդ և 11-րդ հոդվածների 2-րդ մասերից: Եթե դա կատարվեր, Ղատարանն անկասկած կվկայակոչեր իր վճիռները, որոնց համաձայն պետությանը վերագրվող հայեցողության շրջանակի լայն կամ նեղ սահմանները կախված են վիճարկվող հարցից և հոդվածներից:

Քանի որ խնդիրը վերաբերում էր դատավոր-փաստաբան փոխհարաբերություններին և կարգապահական վարույթին (անձի վարքագիծը համաչափ է սանկցիայի խստությանը), կարելի էր եզրակացնել, որ հայեցողության շրջանակի սահմանները պետք է առնվազն այնքան լայն լինեին, որքան որ նախատեսված են Հենդիսայդի և Մարկ Ինթերնի գործերով: Բոլոր դեպքերում անհրաժեշտաբար ծագում է համաչափության խնդրի վերլուծման ու դրա վերաբերյալ որոշում կայացնելու հարցը, ինչը չի կատարվել:

Քանի որ Ղատարանը, այս հարցի շուրջ համաձայնելով Հանձնաժողովի հետ, անմիջականորեն չի անդրադարձել (տե՛ս 33-րդ կետը) դատավոր-փաստաբան հարաբերություններին՝ կապված 1972 թ. հունիսի 9-ի Ղեկրետի 106-րդ և 107-րդ հոդվածներով և 1982թ. հունիսի 15-ի Ակտի 8-րդ հոդվածով սահմանված երդմանը, վճիռը բաց է թողնում այդ դրույթների՝ կոնվենցիային համապատասխանելու հարցը: Փաստաբանների խորհուրդը նույնպես նկատի էր ունեցել վերը նշված դրույթները, քանի որ իր որոշման եզրափակիչ մասում խորհուրդը հիշեցրեց Փաստաբանների ամբողջ միությանը. «վարքագծի ավանդական կանոնների և որպես փաստաբան հանդես գալիս ողջամիտ դատողության կանոնների կիրառման մասին»:

Այնուամենայնիվ, այստեղ մի պարադոքս կա, որը Ղատարանի հիմնավորումները հակասական է դարձնում: Մինչ այժմ կարգապահական սանկցիաները կիրառվում էին պայմանականորեն անօրինական կամ պարսավելի վարքագիծ հայտնաբերելու դեպքում, անուղղակիորեն խրախուսվում էր իշխանությունների կողմից դատավճիռների ընդունումը, մինչդեռ հատուկ դատախազական իշխանության համար թեթև գործերով խնդրի լուծումը 106-րդ հոդվածով նախատեսված կարգապահական վարույթին թողնելը ֆրանսիական ավանդույթ է:

Ղատարանի մեծամասնությունը, ինչպես և Հանձնաժողովը, ցույց տվեց այն կարևորությունը, որը նրանք վերագրում են հանրահավաք անցկացնելու իրավունքին, բայց արդյո՞ք քննության ենթակա գործը տալիս էր այդ սկզբունքի արտահայտման պատշաճ առիթ:

**ԴԱՏԱՎՈՐ ԴԵ ՄԵՅԵՐԻ ՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ
(Թարգմանություն)**

Ես լիովին ընդունում եմ, որ «10-րդ հոդվածի մասով առանձին քննություն անցկացնելու»² անհրաժեշտություն չկար: Բայց իմ կարծիքով, դա պետք է նշանակեր, որ անհրաժեշտ է ոչ թե քննարկել միայն 11-րդ հոդվածը, նույնիսկ եթե դիտարկում ենք այդ հոդվածը «10-րդ հոդվածի լույսի ներքո»³, այլ ավելի շուտ քննարկել երկու հոդվածները (10-ը և 11-րդը) միասին:

Մասնակցելով հանրահավաքին, դիմումատուն, փաստորեն, իրականացրել է ազատ արտահայտվելու և հավաքների ազատության իր իրավունքները և այն վարքագիծը, որի համար նա քննադատվում էր, ներառվում էր ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ իրավունքների շրջանակներում: Այս դեպքում երկու իրավունքներն էլ ավելի քան «փոխկապակցված էին»⁴. դրանցից մեկի իրականացումն ուղղակիորեն կախված էր մյուսի իրականացումից:

Իմ կարծիքով, վճռում նշված հիմնավորումը ցույց է տալիս, որ խախտվել են ինչպես ազատ արտահայտվելու, այնպես էլ հավաքների ազատության իրավունքները⁵:

² Վճռի եզրափակիչ դրույթների 1-ին մաս:

³ Վճռի 37-րդ մաս:

⁴ Վճռի 51-րդ մաս:

⁵ Տե՛ս մասնավորապես վճռի 52-րդ մասը:

ՄԱՍ VII.

ՀԱՎԵԼՎԱԾ 2– ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ

Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդված- Արտահայտվելու ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչնդոտում պետություններին սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային եւ կինեմատոգրաֆիական կազմակերպությունների լիցենզավորում:
2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաև այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդված- Հավաքների և միավորումների ազատություն

1. Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի խաղաղ հավաքների ազատության եւ ուրիշների հետ միավորվելու ազատության, ներառյալ արհմիություններ ստեղծելու եւ իր շահերի պաշտպանության համար դրանց անդամակցելու իրավունքը:
2. Այդ իրավունքների իրականացումը ենթակա չէ ոչ մի տեսակի սահմանափակումների, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական անվտանգության ու հասարակական անդորրի, անկարգություններն ու հանցագործությունները կանխելու, այլ անձանց առողջությունն ու բարոյականությունը կամ նրանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչնդոտում օրինական սահմանափակումներ մտցնել զինված ուժերի, ոստիկանության եւ պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման վրա: